



ArmEIA

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ
ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

(Լրամշակված)



Չեռնարկող՝ «ԱՐԽԻՏՈՆ» ՍՊԸ



Մշակող՝



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|----------|
| 1. Ընդհանուր տեղեկատվություն | Էջ 4 |
| 2. Հավելվածներ | Էջ 4 |
| 3. Օգտագործվող հապավումները | Էջ 5 |
| 4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը | Էջ 5-8 |
| 5. Հիմնադրության փաստաթղթի դրույթների իրականացման մասնակից գերատեսչություններ | Էջ 8 |
| 6. Հիմնադրության փաստաթղթի կազմման՝ նախագծի մշակման հիմքը | Էջ 9 |
| 7. Հիմնադրության փաստաթղթի ՇՄԱՌԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ | Էջ 10 |
| 8. Հիմնադրության փաստաթղթի անվանումը և նպատակը | Էջ 10 |
| 9. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը | Էջ 11 |
| 10. Հիմնադրության փաստաթղթի կարգավորման ենթակա տարածքի նկարագիրը | Էջ 12 |
| 11. Հիմնադրության փաստաթղթի կարգավորման շրջակա տարածքի շրջակա միջավայրի նկարագիրը | Էջ 14 |
| 11.1 Օդային ավազան | Էջ 15 |
| 11.2 Հողային ռեսուրսներ | Էջ 17 |
| 11.3 Ջրային ռեսուրսներ | Էջ 17-19 |
| 11.4 Բուսական աշխարհ | Էջ 19 |
| 11.5 Կենդանական աշխարհ | Էջ 20 |
| 11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ | Էջ 21 |
| 11.7 Թափոններ | Էջ 23 |
| 11.8 Սոցիալական ոլորտ | Էջ 23 |
| 11.9 Համայնքներ | Էջ 23 |
| 12. «Սևան» ազգային պարկ | Էջ 25 |
| 13. «Սևան» ազգային պարկ»-ի, այդ թվում շրջակա միջավայրի բնութագիրը | Էջ 28 |
| 13. 1 Ռելիեֆ | Էջ 28 |
| 13. 2 Կլիմա | Էջ 29 |
| 13. 3 Հողային ռեսուրսներ | Էջ 30 |
| 13. 4 Կենսաբազմազանություն | Էջ 30-35 |
| 13.5 Հատուկ պահպանվող տարածքներ | Էջ 35 |
| 13.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ | Էջ 34-39 |
| 13. 7 «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ «ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂՁԻ» հատվածի Էկոլոգիական բնութագիրը | Էջ 40 |
| 14. Հիմնադրության փաստաթղթով նախատեսված գործունեությունների տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների ընդհանուր բնութագիրը | Էջ 43 |
| 14.1 Ծովափնյա ճեմուղի | Էջ 43 |
| 14.2 Չբոսայգիներ, պուրակներ, կանաչապատ գոտիներ և այլ բաց տարածքներ | Էջ 45 |

| | |
|---|----------|
| 14.3 Ջերմոց-ձմեռային այգի----- | Էջ 45 |
| 14.4 Ծովափնյա տեսարանի(լանդշաֆտ) պահպանման գոտի----- | Էջ 45 |
| 14.5 Ավտոկայանատեղեր ----- | Էջ 46 |
| 14.6 Նավամատույցներ----- | Էջ 46 |
| 14.7 Լողափեր ----- | Էջ 47 |
| 14.8 Մանկական խաղահրապարակներ, սպորտային գոտիներ----- | Էջ 49 |
| 14.9 Քոթեջային գոտիներ----- | Էջ 49 |
| 14.9.1 Հյուրանոցային, պանսիոնատային գոտիներ----- | Էջ 49 |
| 14.9.2 Առևտրի և սպասարկման օբյեկտների գոտիներ----- | Էջ 50 |
| 14.9.3 Ժամանցի բազմաֆունկցիոնալ գոտիներ----- | Էջ 50 |
| 15. Սևանի թերակղզու հատվածում կառուցապատման կանոնակարգման միջոցառումներ ----- | Էջ 51-55 |
| 16. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր----- | Էջ 55 |
| 17. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր----- | Էջ 57 |
| 17.1 Օդային ավազան----- | Էջ 57 |
| 17.2 Հողային ռեսուրսներ----- | Էջ 58 |
| 17.3 Ջրային ռեսուրսներ----- | Էջ 58 |
| 17.4 Բուսական և կենդանական աշխարհ----- | Էջ 59 |
| 17.5 Թափոններ ----- | Էջ 59 |
| 17. 6 Բարեկարգում, լանդշաֆտի վերականգնում----- | Էջ 60 |
| 17.7 Սոցիալական----- | Էջ 60 |
| Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման բնապահպանական կառավարման պլան----- | Էջ 61-67 |
| Օգտագործված գրականության ցանկ----- | Էջ 68 |

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|--|---|
| Հայտ | «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ |
| Ձեռնարկող | «Արխիտոն» ՍՊԸ-ն |
| Ձեռնարկողի իրավաբանական հասցեն | ք. Մասիս 3-րդ թաղ. 10շ. բն 3 |
| Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ | «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾ |
| Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ | (architon-ltd@mail.ru 094/19-49-29) |
| Պատվիրատու | ՀՀ քաղաքաշինության կոմիտե |
| Նախատեսվող գործունեության վարչական տարածքը | ՀՀ Գեղարքունիքի մարզ «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ, Սևան և Լճաշեն համայնքներ |
| Գոտևորման նախագծի մշակող | «ԱՐԽԻՏՈՆ» ՍՊԸ |
| Գնահատման հայտի նախագծող | «Նովայ»ՍՊԸ -Արմիկայ Էյ |
| Հայտի նախագծող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ | Ք. Երևան, Բոյունսովի 6 Հեռ.(012)21-10-01, arm_eia@outlook.com (093)39-77-60 |

2. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ Ն Ե Ր

Հավելված 1.1-1.8 Տարածքի իրադրային սխեմաները

Հավելված 2.Սևան քաղաքի գլխավոր հատակագիծը

Հավելված 3.Լճաշեն գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը

Հավելված 4.Տեխնիկական բնութագիրը

Հավելված 5.Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

Հավելված 6.Սևան քաղաքի պատմամշակութային հուշարձաններ

Հավելված 7.Լճաշեն գյուղի պատմամշակութային հուշարձաններ

Հավելված 8. Դիտողությունների պատասխան ամփոփաթերթը

3. Օգտագործվող հապավումները

ՇՄՆախարարություն՝ շրջակա միջավայրի նախարարություն

ՇՄԱԳՇրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում

ՇՄԱՌԳՇրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում

ԲՅՊՏԲնության հատուկ պահպանվող տարածք

ՍՊԸՍահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿՊետական ոչ առևտրային կազմակերպություն

Սևան ԱՊ «Սևան» ազգային պարկ

ԱԻՆԱրտակարգ իրավիճակների նախարարություն

ԱՆԱռողջապահության նախարարություն

4.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014) (այսուհետ՝ Օրենք)-կարգավորում է հիմնադրության փաստաթղթերի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները(ՇՄԱԳ): Կարգավորում է հիմնադրության փաստաթղթի նախնական գնահատման հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)-սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.)- սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Բուսական աշխարհի մասին» (1999) ՀՀ օրենք-նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)–նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու Էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության Էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

«Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք -կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և

բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում - Ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

«Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

«Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

5. Հիմնադրության փաստաթղթի դրույթների իրականացման մասնակից գերատեսչությունները.

1. ՀՀ ՇՄ նախարարություն-պատասխանատու է բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար:

2. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (ՀՀ ԱԻՆ)-արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանություն, ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակում և իրագործում:

3. ՀՀ Առողջապահության նախարարության (ՀՀ ԱՆ)-պատասխանատու է սանիտարական նորմերի և խմելու ջրի որակի ստանդարտների մշակման, առողջությանն առնչվող բոլոր տեսակի խնդիրների վերացման, կազմակերպությունների և քաղաքացիների

կողմից սանիտարահիգիենիկ նորմերի պահպանման, և հակահամաճարակային միջոցառումների իրականացման վերահսկողության համար:

6. Հիմնադրույթային փաստաթղթի կազմման՝ նախագծի մշակման հիմքը

Նախագիծը մշակվել է «Արխիտոն» ՍՊԸ կողմից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով, 2019թ. դեկտեմբերի 3 -ի ՌՀՀԶԿ-ԳՀԱՇՁԲ-19/38 պայմանագրի և 2020թ. ապրիլի 8-ի N1 համաձայնագրի շրջանակներում՝ պայմանագրում ներառված տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Նախագիծը մշակվել է պատվիրատուի կողմից տրամադրած կադաստրային և տեղագրական քարտեզների (Մ1:10000), Սևան և Լճաշեն համայնքների գլխավոր հատակագծերի, «Սևան» ազգային պարկի աշխատակազմի կողմից տրամադրած նյութերի և քարտեզների, «Արխիտոն» ՍՊ ընկերության արխիվում առկա նյութերի հիման վրա:

Նախագծի շրջանակներում իրականացվել են Սևանի թերակղզու աստիճանների և ճանապարհի, նախատեսվող ճեմուղու և ավտոմոբիլային ճանապարհների տարածքի տեղագրական հանույթների կազմման և ինժեներաերկրաբանական հետազոտման աշխատանքներ: Նախագծի կազմման համար հիմք է հանդիսացել նաև միջազգային փորձը, ուսումնասիրվել են ծովափնյա ճեմուղիների և լողափնյա տարածքների կազմակերպման և օրենսդրական կարգավորումներին առնչվող Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Իսպանիայի, Իտալիայի, Վրաստանի, Ռուսաստանի փորձը:

Նախագծի մշակման հիմք են հանդիսացել.

- Սևան քաղաքի գլխավոր հատակագիծ, 2006թ.:
- Լճաշեն գյուղական համայնքի գլխավոր հատակագիծ, 2012թ.:
- 2019թ. 30 սեպտեմբերի ՀՀ կառավարության 1293-Լ որոշմամբ սահմանված «Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման» 2020թ. միջոցառումների ցանկը:
 - «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշում:
 - «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ», Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշում:
 - «Սևան» ազգային պարկի կանոնադրություն», ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում:
 - «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:
 - «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը:

- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը:
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը:
- Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրեր, մասնավորապես՝ «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիա», Ֆլորենցիա, 2000թ.:
- Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների «Ափամերձ գոտիների կառավարման մոդելային օրենք և ափամերձ գոտիների կառավարման Եվրոպական նորմեր», (European Code of Conduct for Coastal Zones, CO-DBP (99) 11, Geneva, 19 April 1999):
- «Եվրոպայի Մայրցամաքի Կայուն Տարածական Չարգացման Գերակա Սկզբունքներ», (ընդունվել է Եվրախորհրդի Անդամ Պետությունների Նախարարների Կոնֆերանսի (CEMAT) կողմից և հաստատվել է ԵՄ Նախարարների Կոմիտեի Հանձնարարականով Rec1, 2002թ.):

7. Հիմնադրության փաստաթղթի ՇՄԱՌԳ և փորձաքննական գործընթացի վերաբերյալ

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի(այսուհետ Օրենք) համաձայն:

Համաձայն Օրենքի՝ նախնական գնահատման և ռազմավարական գնահատման ենթակա է հիմնադրության փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:

Ռազմավարական գնահատման և փորձաքննության ենթակա են սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, բնապահպանության, ռեկրեացիայի, սպասարկման, անտառտնտեսության, թափոնների օգտագործման, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրության փաստաթղթերը:

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» հիմնադրության փաստաթուղթ է և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման և փորձաքննության:

8. Հիմնադրության փաստաթղթի անվանումը և նպատակը

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ» փաստաթղթի նպատակն է «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածում հանգստի գոտու ստեղծումը, ներդրումային ծրագրերի իրականացման համար նպատակահարմար

գոտիների առանձնացումը, ինչպես նաև պարկի տարածքում կառուցապատման կանոնա-
կարգման չափորոշիչների սահմանումը:

Հիմնադրութային փաստաթղթի և դրա Ռազմավարական Էկոլոգիական գնահատման
իրականացման կարևորագույն նպատակն է Սևանա լճի և գոտեվորվող հատվածի
կենսաբազմազանության վերականգնումն ու առողջացումը, վնասակար ազդեցությունների
նվազեցումը, լճի Էկոհամակարգի մաքրումն ու վերականգնումը:

Տարածքի նախագծման սկզբունքներն են.

- ապահովել տարածքի Էկոլոգիական հավասարակշռությունը,
կենսաբազմազանությունը, բնական լանդշաֆտների պահպանությունը, բնական պաշարների
արդյունավետ օգտագործումը, կայուն տարածական զարգացումը,

- ընտրել հատակագծային կառուցվածքը՝ բնության առանձնահատկություններին
ներդաշնակ, ընդգծելով լանդշաֆտի և ռելիեֆի առանձնահատկությունները,

- ապահովել քաղաքաշինական միջավայրի սոցիալական որակը և
հարմարավետությունը, կառուցապատման միասնականությունը, ինժեներական
ապահովումը, տրանսպորտային և կոմունալ-կենցաղային սպասարկումը, տարածքների
կանաչապատումը և բարեկարգումը, սպասարկման և ենթակառուցվածքի օբյեկտների,
ռեկրեացիոն տարածքների, ընդհանուր օգտագործման տարածքների և հասարակական
տարածքների մատչելիությունը, այդ թվում՝ հաշմանդամների համար,

- ստեղծել կայուն տնտեսական և սոցիալական զարգացման համար բարենպաստ
քաղաքաշինական պայմաններ, նպաստել հարակից համայնքների տնտեսական
ինքնուրույնության բարձրացմանը, ներդրումների ներգրավմանը, ռեկրեացիոն տարածքների
արդյունավետ օգտագործմանը և բարելավմանը,

- ապահովել հարակից համայնքների հետ փոխկապակցվածությունը և փոխլրացնող
զարգացումը:

9. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Նախագիծը մշակվել է «Արխիտոն» ՍՊԸ կողմից, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի
պատվերով, 2019թ. դեկտեմբերի 3-ի ՌՀՀԵԿ-ԳՀԱՇՁԲ-19/38 պայմանագրի և 2020թ. ապրիլի
8-ի N1 համաձայնագրի շրջանակներում՝ պայմանագրում ներառված տեխնիկական
առաջադրանքին համապատասխան: «ԱՐԽԻՏՈՆ» ՍՊ ընկերության իրավաբանական
հասցեն՝ ք. Մասիս 3-րդթաղ. 10շ. բն 3:

**«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԾԻ ՀԱՏՎԱԾԻ
ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԶԱՂԱԶԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»** փաստաթղթի
դրույթներով կարգավորվում է նշված հատվածի գոտևորումը: Տարածքը տեղակայված է Սևան
ազգային պարկի Լճաշեն-Սևան հատվածում:

10. Հիմնադրութային փաստաթղթի կարգավորման ենթակա տարածքի

Նկարագիրը

Նախագծվող տարածքի մակերեսն է՝ Լճաշեն-Սևան հատվածում՝ 422.976 հա, Սևանի թերակղզու հատվածքում՝ 82.62 հա: Այս տարածքները պատկանում են «Սևան» ազգային պարկին, որի հողերը հատուկ պահպանվող են, ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որտեղ նախատեսվող բոլոր գործունեությունները պետք է համապատասխանեն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքով սահմանված գոտևորման պահանջներին և պայմաններին:

Պարկի տարածքը համեմատաբար հարթ է, ջրից մինչև ավտոմայրուղին ընկած հատվածում ռելիեֆը մեղմ բարձրանում է, տեղ տեղ կան բավականաչափ մեծ մակերես ունեցող ավելի ցածրադիր փոսանման հատվածներ: Գրեթե ամբողջ լողափնյա հատվածը, բացառությամբ մեկ-երկու հանրային լողափերի, բաժանված է տարբեր տնտեսվարողների միջև, հողամասերը ցանկապատված ու պարսպապատված են, դրանցից շատերում տեղադրված են մեկ հարկանի ոչ հիմնական տնակներ: Հիմնական շինությունները մեկից չորս հարկանի են, մեծ տոկոս են կազմում չօգտագործվող կիսակառույց շինությունները: Շինություններից շատերը տեղադրված են գործող նորմատիվային պահանջների բազմաթիվ խախտումներով, ունեն անհամաչափ և աններդաշնակ լուծումներ, կառուցվել են տնտեսվարողների տարատեսակ ճաշակով և հաճախ առանց սահմանված կարգով մշակված և հաստատված նախագծերի:

Կարմիր խաչի հիվանդանոցի մասնաշենքերը լքված տեսք ունեն, հավանաբար մեկից ավելի տարի չեն օգտագործվում իրենց նշանակությամբ, տանիքները, պատուհանները քայքայված են:

Նախագծվող տարածքի որոշ հատվածներով անցնում են Էլեկտրական գծեր, տեղակայված է ենթակայան: Ջրածածկման գոտում են գտնվում բազմաթիվ շինություններ և ծառապատ տարածքներ: Հատկապես աղետալի վիճակում է գտնվում «Լավանդա սիթի» կոչված տարածքը: Բազմաթիվ տներ(մեկ հարկանի քարե շինություններ են), ծառեր և բույսեր հայտնվել են ջրի մեջ, տարածքը ճահճացած է, այստեղ ձևավորվել է նոր կենսամիջավայր՝ բույսերը և թռչուններն ավելի բնորոշ են փոքր արհեստական լճակներին ու ճահիճներին, քան բարձր լեռնային լճին:

Վերակառուցման, մաքրման ու բարեկարգման կարիք ունի նաև Հրազդան գետի ակունքը և դրան հարակից ամբողջ տարածքը (նավահանգիստն իր բոլոր շինություններով):


Կառուցապատման և ճարտարապետության տեսանկյունից լուրջ խնդիրներ են կուտակվել Սևանի թերակղզու հատվածում, դեպի Սևանավանք տանող աստիճանների մուտքի հրապարակում, որտեղից և սկսվում է զբոսաշրջիկների վերելքը դեպի Սևանավանք:

Քաղաքաշինական և մշակութային առումով այս կարևոր տարածքը կառուցապատված է տարերայնորեն, առանց որևէ քաղաքաշինական սկզբունքի, ճարտարապետական ոճի ու ճաշակի: Շենքերն իրենց չափերով և արտաքին տեսքով մրցակցում են ինչպես Սևանավանքի եկեղեցիների նուրբ ճարտարապետության, այնպես էլ մեկը մյուսի հետ:

Հրապարակի պարագծով տեղադրվել են փայտե տաղավարներ, փորձելով կանոնակարգել հուշանվերների վաճառքը, սակայն գոյություն ունեցող շենքերի ֆոնին դրանք չեն փրկում իրավիճակը:

Նախագծվող տարածք

Հատակագիծ 1.



Նախագծվող տարածքում առկա հանգստյան տների և այլ նմանատիպ օբյեկտների վերլուծության համաձայն՝ ներկայումս առկա է մոտ 4200 հանգստյան տեղ՝ հյուրանոցային, հանգստյան տների, քրթեջների և տնակների (վագոնչիկներ) կազմում, որոնցից առնվազն 60%-ն ապահովված է միայն սառը ջրով և սանհանգույցով (լոկալ սեպտիկ հորերի և բիոզուգարանների տեսքով): Ընդունելով, որ այս հանգստյան օբյեկտների 70 %-ն են գործող (շատերը կիսակառույց են, ջրածածկ կամ լքված), և որ սեզոնի(90 օր) դրանք աշխատում են միջինը մոտ 70% լցվածությամբ՝ ստացվում է 185 000-220 000 հանգստացող սեզոնիկ:



Նկար 1.



Նկար 2.



Նկար 3.

Քանի որ առաջադրանքով նշված չէ զբոսաշրջիկների նախատեսվող հոսքերի մասին տեղեկատվություն, նախագծում մշակվել են մոտեցումներ՝ տարածքի առավելագույն հնարավորությունները բացահայտելու և հաշվարկելու սկզբունքից, հաշվի առնելով նաև տարածքի էկոլոգիական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը (տարածքային հնարավորությունները, կանոնակարգված կառուցապատման ապահովումը՝ լճի տեսարանների պահպանման նպատակով և այլն: Չբոսաշրջիկների և հանգստացողների համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, միաժամանակ, լճի էկոլոգիական անվտանգությունը ապահովելու նպատակով, նախագծով մշակվելու են ինժեներական ենթակառուցվածքների սխեմաները, նախատեսվելու է կոմունալ գոտի, որտեղ նախատեսվում է կառուցել տարածքը սպասարկող կոյուղաջրերի մաքրման կայաններ (ԿՄԿ): Տարածքը բաժանվելու է մի քանի կոյուղացման գոտիների և յուրաքանչյուր գոտու ցածր նիշում տեղադրվելու է միջին հզորության մաքրման կայան (100-1000մ³ արտադրողականությամբ, կախված գոտու չափերից և դրանում նախատեսված կառուցապատումից): Մաքրման կայանների տեսակները՝ համապատասխան ցուցանիշներով կշգրտվեն նախագծի վերջնական տարբերակում և կներառվեն ՇՄԱՌԳ հաշվետվությունում:

Համաձայն վերը նշված պայմանների և նախնական հաշվարկների՝ նախագծի ամբողջովին իրագործման դեպքում, տարածքում միաժամանակյա հանգստացողների թիվը (հյուրանոցներում, քրթեշներում, վրանային գոտում և մեկ օրով լողափեր այցելողների թիվը) կարող է հասնել 27500, գումարելով նաև օբյեկտները սպասարկող անձնակազմը՝ 29000 մարդ: Իսկ հանգստացողների համար ավելի մեծ հնարավորություններ (ծավալներ) ապահովելու անհրաժեշտության դեպքում, կշարունակվի պրոմենադը և կառուցապատման գոտիները մինչև Շողակաթ (Շորժա)՝ հավասարապես բաշխելով անտրոպոգեն ճնշումները Սևանա լճի նաև այլ հատվածների վրա:

11. Հիմնադրության փաստաթղթի կարգավորման շրջակա տարածքի շրջակա միջավայրի նկարագիրը

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելքում, մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Մարզը սահմանակից է ՀՀ Տավուշի և Լոռու (հյուսիսում),

Կոտայքի և Արարատի (արևմուտքում) և Վայոց Ձորի մարզերին (հարավում), ինչպես նաև Ադրբեջանին (արևելքում): Գտնվում է ծովի մակերևույթից 1900-3500 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 5348 կմ² տարածք: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115կմ, արևմուտքից արևելք՝ 85կմ: Մարզը շրջափակվում է Գեղամա, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի, Վարդենիսի գլխավոր լեռնաշղթաներով: Մարզի տարածքով անցնում է Սոթք տանող երկաթգիծը, ապահովված է միջմարզային, ներմարզային, ներհամայնքային ընդհանուր ճանապարհային ենթակառուցվածքներով:

11.1 Օդային ավազան.

Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Այստեղ օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է՝ հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ:

Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ: Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր առողջարար կլիմայով, առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր: Կլիման բարեխառն լեռնային է: Օդի միջին ջերմաստիճանն հասնում է +18°+20°С: Տարեկան տեղումների քանակը կազմում է 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում՝ մինչև 1000 մմ: Առկա են մշտական և ուժեղ քամիները:

Ըստ Արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տեղեկատվության՝ 2019թ. դեկտեմբերին հանրապետության շրջանների զգալի մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 2-4 աստիճանով:

Աղյուսակ 1.

Օդի միջին ամսական և տասնօրյակային ջերմաստիճաններն ու շեղումները 1961-1990թթ. Համապատասխան նորմաներից, 2019թ.հունվար – դեկտեմբեր

| | Միջին ջերմաստիճանը և շեղումը նորմայից, °С | | | | | | | | | |
|-------------|---|--------|--------------|------------|------------------|--------|-------------------|--------|------------------|--------|
| | ամսական միջին | | | | առաջին տասնօրյակ | | երկրորդ տասնօրյակ | | երրորդ տասնօրյակ | |
| | գրանցված | շեղում | առավելագույն | նվազագույն | գրանցված | շեղում | գրանցված | շեղում | գրանցված | շեղում |
| Գեղարքունիք | -2.8 | +2.1 | +1.3 | -2.0 | -0.2 | -1.1 | -3.4 | +1.8 | -2.7 | +4.2 |
| | +0.7 | +3.1 | +5.8 | -8.0 | -3.3 | +2.4 | +1.0 | +5.3 | +1.4 | +7.5 |

Աղյուսակ 2.


Օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները, 2019թ. հունվար - դեկտեմբեր

| | |
|---------------------------|-------------------------|
| Առավելագույն ջերմաստիճանը | Նվազագույն ջերմաստիճանը |
|---------------------------|-------------------------|

| | դիտակայանի տեղադրման վայրը | դիտման օրերը | C | դիտակայանի տեղադրման վայրը | դիտման օրերը | C |
|-------------|----------------------------|--------------|-----|----------------------------|--------------|-----|
| | | | | Չվարթևոց | 23-24 | |
| | | | | Արտաշատ | 23-24 | |
| Գեղարքունիք | Մարտունի | 20 | +11 | Մասրիկ | 13 | -14 |

Գծապատկեր 1.

Տեղումների քանակներն ու նորմաներն ըստ դիտակայանների, 2019թ. Հունվար – դեկտեմբեր



Իջևան
Դիլիջան
Վանաձոր
Տաշիր
Գյումրի
Աշոցք
Շիրազ
Գավառ
Հրազդան
Ապարան
Աշտարակ
Երվանդ
Արմավիր
Արարատ
Արարատ
Անանտեղ
Կոնի
Ջերմուկ
Մերի
Գորիս
Դուշիսի լեռնակց
Ամբերի
Որոտան
Վաղաշեն
Լեռնային Արարատ

Աղյուսակ 3.

Ձյան ծածկի միջին տասնօրյակային բարձրություններն ու 1961-1990թթ. նորմաներն ըստ դիտակայանների, 2019թ. հունվար - դեկտեմբեր

| | Առաջին տասնօրյակ | | Երկրորդ տասնօրյակ | | Երրորդ տասնօրյակ | |
|-------|------------------|-------|-------------------|-------|------------------|-------|
| | փաստացի | Նորմա | փաստացի | Նորմա | փաստացի | Նորմա |
| Շիրազ | - | 2 | 0.3 | 2 | 0.3 | 3 |
| Գավառ | 1.0 | 6 | 0.1 | 6 | 0.3 | 7 |

11.2 Հողային ռեսուրսներ.

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով: Մարզը հարուստ է արգավանդ հողերով, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200մ բարձրություններում, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտները: Լանդշաֆտը լեռնա-տափաստանային, լեռնամարգագետնային է, Արեգունու և Սևանի լեռնաշղթաներում՝ տեղ-տեղ լեռնաանտառային: Մարզի տարածքի 24000հա-ն անտառածածկ է: Բացառիկ նշանակություն ունեն Դարանակի կաղնուտները և Ծափաթաղի գիհուտները:

Մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն, զարգացած են անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է) և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մարզի հողային ֆոնդի 16,9%-ը:

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարներ: Առկա են փոքր հիդրոէլեկտրակայաններ (ՓՅԷԿ): Սևանա լճում ձևավորվել է ցանցավանդակային ձկնաբուծությունը, ապահովելով տարեկան 50 հազար տոննա ձկան արտադրություն:

11.3 Ջրային ռեսուրսներ.

Մարզի տարածքի 1/4-ը ծածկված է ջրով, որի հիմնական մասը կազմում է Սևանա լճի ջրահավաք ավազանը: Այստեղ է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից մինչև 1900մ) եզակի Էկոհամակարգով Սևանա լիճը: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է և ունի ոչ միայն մարզի, այլև հանրապետության համար առանձնահատուկ կարևորություն:

Սևանա լիճ. հիմնադրության փաստաթղթի կարգավորման հատվածը տեղակայված է Սևանա լճի ափամերձ տարածքում: Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձևալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն

մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան: Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է Էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի

բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա–Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան–Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թ.):

Համաձայն 2014թ. « Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի Էկոհամակարգերի պահպանության, Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Արդյունքում՝ 2003-2010թթ. լճի մակարդակը բարձրացել է 384 սմ, ինչը նախադրյալներ է ստեղծել ջրաէկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնման համար: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգտագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղուլին, որոնք կորցնում են բազմազան համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:

Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մտնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Սևանա լճի համար գերխնդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքման կայանների նախատեսումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

11.4 Բուսական աշխարհ.

Մարզի բուսական աշխարհը բավականին հարուստ և բազմազան է: Բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ:

Այստեղ գրանցված են մոտ 1600 տեսակից ավելի բարձրակարգ բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելին), այդ թվում՝ շուրջ 60 հազվագյուտ ու անհետացող, 20 Էնդեմիկ՝ որոնք աճում են միայն Սևանի ավազանում-ԼՐՁՈՒՆ ՍԵՎԱՆԻ (ISATIS SEVANGENSIS N.), ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՎԱՌՎՈՒԲԿ (ALISSUM HAJASTANUM V.), ՈՂՆԱԹՈՒՓ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ (ACANTHOLIMON GABRIELJANAE Mirz.) և այլն: Կան անոթավոր բույսերի 1587 տեսակ, 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Շուրջ 60 բուսատեսակներ համարվում են դեղաբույսեր և 100-ը ուտելի: Կան նաև 267 տեսակի սնկեր, որից 100 տեսակը ուտելի են և 24 տեսակը՝ թունավոր: Ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով,

42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով:

Ջրային բուսականությանը, անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, ունի երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների:

Կարմիր գրքում գրանցված են՝ Խոզանափուշ Ֆյոդորովի *Cousinia fedorovii* Takht., Լրջուն Սևանի *Isatis sevangensis* N. Busch, Թրաշուշան հայաստանյան *Gladiolus hajastanicus* Gabrielian, Յիրիկ Լրբագեղ - *Iris elegantissima* Sosn, Վիշապագլուխ Ավստրիական - *Dracocephalum austriacum* L., Գառնառվույտ Հայկական - *Oxytropis armeniaca* Sosn. ex Mulk.:



Նկար 4. Խոզանափուշ Ֆյոդորովի Նկար 5. Լրջուն Սևանի

Նկար 6. Թրաշուշան հայաստանյան

11.5 Կենդանական աշխարհ.

Մարզի կենդանական աշխարհը նույնպես հարուստ ու բազմազան է: Մարզի տարածքում հաշվառում են 639 տեսակի հողվածոտանիներ, երկարաչանչ խեցգետին, իսկ ողնաշարավոր կենդանիների ֆաունան ներկայացված է շուրջ 300 տեսակներով, այդ թվում՝ 43 տեսակի փափկամարմիններ, կաթնասունների 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսան, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների 267 տեսակ, 3 տեսակ երկկենցաղներ, 17 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը - SALMO ISCHCHAN Kessler, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը - VARICOHINUS CAPOETA SEVANGI, Սևանի բեղլուն-BARBUS LACERTA GOKTSCHAIKUS և այլն: Պատահաբար լին է ներթափանցել նաև լճածածանը: Հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (*Lacertilia*), իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին:

Կարմիր գրքում գրանցված են՝ սողուններից 2 տեսակ՝ Խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*): Կաթնասունների 6 տեսակ, (Բեզդարյան այծ (*Capra aegagrus* Erxleben) և այլն/, 39 թռչնատեսակներ (Հայկական որոր (*Larus armenicus*), Աբրիեյանի, փետրախոտ Գեղարքունիքի, Խոնդատ Սևանի և այլ), ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղլուն (*Barbus goctschaiicus* Kessler) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi*, Filippi) հողվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռը - *Maculinea arion zara* Jachontov, Մթնշաղային կապտաթիթեռ - *Maculinea*

nausithous, Աստեւած կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus* Danchenko, 2000, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae* Forster, 1956, Թուրքական կապտաթիթեռ - *Agrodiaetus turcicus* Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:



Նկար 7. Արին կապտաթիթեռ



Նկար 8. Մթնշաղային կապտաթիթեռ



Նկար 9. Աստեւած կապտաթիթեռ



Նկար 10. Նինայի կապտաթիթեռ



Նկար 11. Թուրքական կապտաթիթեռ



Նկար 12. Փոքրասիական մողես



Նկար 13. Բեզդարյան այծ

11.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գեղարքունիքի մարզի բոլոր բնակավայրերը հարուստ են պատմամշակութային, հնագիտական և բնական հուշարձաններով, առկա են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ՝ լճեր, խարամային կոներ, խառնարաններ, ընդարձակ «քարային ծովեր», որոնք խթան են հանդիսանում մարզում զբոսաշրջության զարգացման համար: Այստեղ կարելի է հանդիպել նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հնավայրերի հետքերի, սեպագիր արձանագրությունների: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգ հազարամյա հնության դամբարաններ:

Գեղարքունիքի մարզը և Սևանի ավազանը հարուստ են բնական հուշարձաններով: Կան 15 բնության հուշարձաններ, որից 7-ը՝ երկրաբանական, 6-ը՝ ջրատերկրաբանական, 1-ը ջրագրական և 1-ը՝ կենսաբանական.

Համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման Հավելվածի՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկին համապատասխան, Գեղարքունիքի մարզում երկրաբանական հուշարձաններից են.

- «Սևկատար» հրաբուխ՝ Գավառ քաղաքից 20 կմ արևելք,
- «Աժդահակ» հրաբուխ՝ Գավառ քաղաքից 25 կմ հարավ-արևմուտք,
- «Անանուն» ծալքավորում՝ Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին՝ Սևան քաղաքից 45 կմ հեռավորության վրա,
 - «Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)՝ Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք,
 - «Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն՝ Լճաշեն գյուղից 1 կմ հարավ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ,
 - «Արմաղան» հրաբուխ՝ Մադինա գյուղից 3.5 կմ արմուտք,
 - «Հարավանք» բրածո ֆաունա՝ Հայրավանք գյուղից 2-3 կմ հյուսիս-արևելք:

Առկա են նաև.

- Վարդենիսի լեռնաշղթայի հրաբխային և խարամային կոները (Աժդահակ, Կարմրասար, Սպիտակասար լեռնագագաթները),
- Լանջաղբյուր, Կարմիր գյուղ, Գեղարքունիք գյուղերի շրջակայքի ժայռային մերկացումները,
 - Սևանի լեռնաշղթայի լանջերի (Շորժա գյուղի շրջակայքում) օֆիոլիտային ապարների մերկացումները, - Արտանիշի թերակղզու կրաքարերի մերկացումները,
 - Սպիտակասար լեռնագագաթի արևելյան մասում օբսիդիանների մերկացումները,

- Լճաշեն գյուղի, Գավառ քաղաքի շրջակայքի էյլովիալ քարացրոնները (չինգիլներ),
- Գրիձոր, Արգիշի գետերի կիրճերը,
- Մարտունի, Գրիձոր, Գեղարքունիք, Աստղածոր, Վարդենիս գետերի վերին հոսանքների տաշտակաձև հովիտները,
- Արեգունի լեռնաշղթայի կաղնու և գիհու և սուր անտառները, Արեգունու, Սևանի, Փամբակի լեռնաշղթաների անտառային տարբեր մասնակային ձևերը,
- Մասրիկ, Վարդենիս գետեր հովիտների ճահճոտ մարգագետինները և եղեգնուտները, - Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի քարացրոնները՝ «լուսնային լանդշաֆտ»-ը,
- Արգիճի գետի ոլորաններ և ճահճոտ հովիտը, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերից հոսող գետերի կիրճերը՝անտառային և մասնակային ձևերով: Բնական հուշարձանների մի մասն ունի հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ:

11.7 Թափոններ.

Մարզի աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից և տեղափոխվում է բաց աղբավայրեր: Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Չարագցման Եվրոպական բանկի (ՎՉԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի Էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P): Մարզի արտանետվող կեղտաջրերը չեն մաքրվում և լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորեր:

11.8 Սոցիալական ոլորտ.

Գեղարքունիքի մարզը Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից է, որի բնակչությունը 2019թ. դրությամբ կազմում է 228,3 հազար մարդ: Բնակչության խտությունը կազմում է 43.0 մարդ/1կմ²: Հիմնականում ապրում են հայեր(99%): Այն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր: Մարզը հիմնականում գաղիֆիկացված է: Գեղարքունիքի մարզում գործում է մեկ պետական համալսարան, ապահովված է միջնակարգ մասնագիտական հանրակրթական, երաժշտական դպրոցներով, մարզադպրոցներով, առողջապահական՝ բժ), մշակույթի օջախներով, թանգարաններով, գրադարաններով և այլն: Չբուսաշրջության ոլորտը՝ առողջական, Էկո, Էքստրիմ և ջրային, հանդիսանում է մարզի բնակչության հիմնական զբաղվածության ուղղություններից մեկը: Մարզի զբոսաշրջության համար մեծ ներուժ է

ծառայում համապատասխան ենթակառուցվածքների, պատմության և մշակութային վայրերի առկայությունը:

Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են Սևանա լճի և Նրա Էկոհամակարգերի վերականգնման և պահպանման, նաև գործազրկության հետ:

11.9 Համայնքներ

Հիմնադրույթով նախատեսված կարգավորման ենթակա տարածքը ներառում է Սևան համայնքի և Լճաշեն բնակավայրի «Սևան» ԱՊ-ի տարածքները: Կարգավորման ենթակա տարածքի հեռավորությունը Սևան քաղաքի և Լճաշեն գյուղի կառուցապատված հատվածներից կազմում է համապատասխանաբար՝ մոտ 2կմ և 5կմ:

Ք. Սևան. Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին՝ լճից 200-250մ հեռավորության, ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա գտնվում է Սևան քաղաքը: 2019թ. տվյալներով ունի 25 844 բնակիչ: Քաղաքի զարգացման հիմնական ուղղությունը զբոսաշրջությունն է: Սևան համայնքը զբաղեցնում է 1784.68հա հողատարածք: Ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով, ունի գրունտային ջրերի բարձր մակարդակ: Տարածված են թույլ անկայուն լճային կարբոնատային ավազները, կավեր, ավազակավեր, խճեր:

Կլիման մեղմ է, բարձր լեռնային՝ չափավոր տաք ամառ և չափավոր սառը, քամոտ ձմեռ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին կազմում է $-12,5^{\circ}\text{C}$, հուլիսին՝ $+22,5^{\circ}\text{C}$: Տարվա ընթացքում գերիշխում են հյուսիսային, հարավ-արևմտյան և արևմտյան ուղղության քամիները: Քաղաքի օդային ավազան արտանետումների հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը, ջեռուցման համակարգերը: Մարզը գազիֆիկացված է: Սևան համայնքը կոյուղացված է, բայց չունի կոյուղաջրերի մաքրման համակարգ: Համայնքի կոյուղաջրերն առանց մաքրման թափվում են ձորակները, քաղաքին կից հոսող Հրազդան գետը: Սևան համայնքում աղմուկի հիմնական աղբյուրը ավտոմոբիլային տրանսպորտն է:

Կոշտ կենցաղային թափոններն առանց տեսակավորման և դասակարգման հեռացվում և պահվում են գրունտային ծածկի տակ: Սևան համայնքի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը ներկայումս կազմում է 711,68 հա, այդ թվում ընդհանուր օգտագործման՝ 71,98 հա (33,32 մ² /մարդ):

Պատմամշակութային և բնության հուշարձանները. Սևան քաղաքի Ցամաքաբերդ կոչվող թաղամասից մոտ 2.5-3 կմ դեպի արևելք գտնվում է մատուռ, որ տեղացիներն անվանում են «Մաշտոցներ», Սպիտակ բերդի Աղջապալա միջնադարյան ամրոց, պահպանվել են նույն անունը կրող ընդարձակ բնակատեղին՝ 13-14-րդ դդ. եկեղեցու ավերակներով և մի քանի գերեզմանոցներով: Առկա է նաև միայն Հայկական լեռնաշխարհին բնորոշ Վիշապ, վիշապներ, վիշապաքարեր - մեգալիթյան հուշարձան, քարակոթող՝ մեկ կտոր քարից: Պատմամշակութային հուշարձանների ցանկը ներկայացված է՝ (Հավելված 6.):

Լճաշեն գյուղը. գտնվում է Գեղամա և Փամբակի լեռնաշղթաների զոգավորությունում՝ Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Ունի համեմատաբար բարենպաստ կենսապայմաններ, ընդարձակ և հարթ սևահողային տափաստան, որը գյուղի հացի

շտեմարանն է: Համայնքի տարածքը կազմում է 5954 հա, բնակչությունը 2018թ. տվյալներով կազմում է 4863 մարդ: Որպես բնակավայր գյուղն անվանվել է Լճաշեն 1946թ-ից:

Լճաշենի կլիմայի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կազմում է՝ հունվար ամսին օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -30 աստիճան, իսկ օգոստոսին բարձրանում է +300: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է մինչև 600 մմ:

Հարուստ է Լճաշենի բուսաշխարհը (բացված գրունտների բույսեր, արմատական ավազներ բույսեր, ալպյան գոտու բույսեր), հաշվվում է շուրջ 1600 բուսատեսակ, որոնցից 1500-ը ծաղկավոր բույսեր են: Գյուղում, բացի հայկական և իրանական տեսակներից, կան նաև բույսերի Էնդեմիկ տեսակներ: Դրանց մեջ քիչ չեն նաև դեղաբույսերը:

Հացազգի մշակաբույսերից գյուղում աճեցնում են աշնանացան ցորեն, գարնանացան գարի, վարսակ, հաճար, աճեցնում են նաև կարտոֆիլ:

Պատմամշակութային և բնության հուշարձանները. Գյուղի տարածքը համարվում է թանգարան՝ բաց երկնքի տակ: Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով՝ Դամբարանադաշտի հարավային ծայրին, երևում է Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու հնագույն քաղաքատեղիի մնացորդները, որը գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն և տարածվում է 15 բլուրների վրա:

Կատարված պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են նախապատմական շրջանի բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, դամբարանադաշտեր ու առանձին կոթողներ:

Լճաշեն հնագիտական հուշարձանը համաշխարհային ճանաչում ստացավ գյուղից 3 կմ հարավ-արևելք, լճի ավազները հատվածում գտնվող բրոնզեդարյան դամբարանադաշտի շնորհիվ: Այն զբաղեցնում է 8 հեկտար տարածք և ընդգրկում է շուրջ 800 դամբարան Պատմամշակութային հուշարձանների ցանկը ներկայացված է՝ (Հավելված 7.):

12. Սևան ազգային պարկ

«Սևան» ազգային պարկը (այսուհետ՝ պարկ) ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային պարկ ստեղծելու մասին» N 125 որոշմամբ: Ըստ նշված որոշման՝ պարկի տարածքը կազմել է 150,1 հազար հա, որից ջրային մակերեսը 125,3 հազ. հա, ցամաքային տարածքը՝ 24.8 հազար հա, որից Սևանի շրջանին բաժին է ընկել 2700 հա, Գավառի շրջանին՝ 3200 հա, Մարտունու շրջանին՝ 3500 հա, Վարդենիսի շրջանին՝ 11400 հա, Կրասնոսելսկի շրջանին՝ 4000 հա: Պարկը գտնվում է հանրապետության հյուսիս-արևելյան հատվածում՝ Գեղարքունիքի մարզում: Շրջապատված է Գեղամա, Վարդենիսի, Սևանի, Փամբակի և Արեգունու լեռնաշղթաներով: Այն ընդգրկում է լճի ջրային հայելին և ավազների տարածքի ջրից ազատված հատակային գրունտները՝ հիմնականում մինչև լճի շուրջ՝ ավտոճանապարհը: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (2001թ. Մայիսի 15) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի Էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ: ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 30-ի թիվ 927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ

պետական հիմնարկը վերակազմակերպվում է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության:

Սևան ազգային պարկը բաժանվում է հետևյալ տարածագործառնական գոտիների. արգելոցային (7,464 հա, որից ցամաքային՝ 4,289 հա), արգելավայրային (2,652 հա, որից ցամաքային՝ 2,359 հա), ռեկրեացիոն (4,753 հա) և տնտեսական (11,266 հա):

Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է:

Պարկի ստեղծման նպատակներն են՝

1) Սևանա լճի ավազանի ջրային ու ցամաքային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի ապահովումը, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանությունը.

2) Սևանա լճի ավազանին բնորոշ հազվագյուտ և անհետացող վայրի բույսերի ու կենդանիների տեսակների, գենոֆոնդի և դրանց բնակության միջավայրի պահպանությունը.

3) բնական լանդշաֆտների, դրանց առանձին տարրերի, բնական գործընթացների և երևույթների գիտական ուսումնասիրությունը.

4) պարկի տարածքի բնական էկոհամակարգերում ընթացող գործընթացների կանխատեսումն ու գնահատումը.

5) բնական օբյեկտների, այդ թվում՝ կենսաբանական պաշարների արդյունավետ օգտագործումը, օգտագործման ձևերի ու բնության պահպանության գիտական հիմունքների մշակումը.

6) էկոլոգիական մոնիթորինգի կազմակերպումը, բնության տարեգրության վարումը և պարկի ու հարակից տարածքների բնության թանգարանի գործունեության կազմակերպումը.

7) ճանաչողական զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման նախադրյալների ապահովումը.

8) բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության և իրազեկման աշխատանքների իրականացման ապահովումը:

Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքների հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակային նշանակությանը հակասող գործունեություն: Այլ հողատերերի, հողօգտագործողների և հողամասերի սեփականատերերի հողերը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց շենքերն ու կառույցները, որոնք գտնվում են պարկի սահմաններում, օգտագործվում են իրենց նշանակությանը համապատասխան՝ այդ անձանց կողմից պահպանելով բնապահպանական նորմերը՝ սահմանված Պարկի կանոնադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Պարկի տարածքը համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն և 2019թ. հուլիսի 25-ի N 947-Ն որոշումներով հաստատված, ինչպես նաև «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի՝ բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

1) արգելոցային՝ ընդգրկում է «Արտանիշի», «Նորաշենի», «Լիճք-Արգիշի» և «Գիլլի» արգելոցները.

2) արգելավայրային՝ ընդգրկում է «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» և «Նորաշենի» արգելավայրերը.

3) ռեկրեացիոն.

4) տնտեսական:

Արգելոցային գոտիների ստեղծման նպատակներն են՝

1) Արտանիշի թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու և նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզուարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանության ապահովումը.

2) Նորաշեն համայնքին հարակից կղզիներում թռչունների, մասնավորապես, հայկական արծաթափայլ որորի, որպես Հայաստանում բնադրող միակ էնդեմիկ թռչունի, բնականոն ապրելակերպի ու վերարտադրության ապահովումը.

3) Լիճքի հանքային աղբյուրների, Արգիշի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանության, ինչպես նաև արժեքավոր և հազվագույտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակի և Սևանի բեղլուի բնական ձվադրման ու զարգացման ապահովումը.

4) Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանության, արժեքավոր և հազվագույտ ձկնատեսակների՝ Սևանի իշխանի, Սևանի կողակի և Սևանի բեղլուի բնական ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանության, որպես թռչունների բնադրավայր, ապահովումը.

5) արգելոցների տարածքներին բնորոշ բնական լանդշաֆտների պահպանումը.

6) բնական գործընթացները խոչընդոտող մարդածին գործոնների բացահայտումը և դրանց կանխարգելումը.

7) կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության, վերականգնման և բնականոն զարգացման ապահովումը,

8) մարդածին բացասական ազդեցության կանխարգելումն արգելոցի Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների բնականոն զարգացման վրա:

Արգելավայրային գոտիների ստեղծման նպատակներն են՝

1) Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանության և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնադրավայրերի, ինչպես նաև արժեքավոր և հազվագույտ ձկնատեսակների ձվադրման ու զարգացման ապահովումը.

2) Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանության ապահովումը.

3) արգելավայրերի տարածքներին բնորոշ բնական լանդշաֆտների պահպանումը.

4) բնական գործընթացները խոչընդոտող մարդածին գործոնների բացահայտումը և դրանց կանխարգելումը.

5) կենսաբազմազանության և լանդշաֆտների պահպանության, վերականգնման և բնականոն զարգացման ապահովումը:

Ռեկրեացիոն գոտու ստեղծման նպատակներն են՝

1) բնական լանդշաֆտների, բուսական ծածկույթի, Սևանա լճի ափամերձ հատվածի բնական և մշակութային ժառանգության բնապատմական և գեղագիտական արժեքների պահպանության ապահովումը՝ քաղաքացիների հանգստի կազմակերպման համար.

2) ազգային պարկի տարածքի զբոսաշրջային կարողությունների բացահայտումն ու պահպանումը և զբոսաշրջության տարբեր ձևերի, այդ թվում՝ ճանաչողական զբոսաշրջության զարգացմանը նպաստելը.

3) ռեկրեացիոն գոտու տարածքների նպատակային օգտագործման ապահովումը.

4) ռեկրեացիոն գոտում առկա պատմամշակութային հուշարձանների և դրանց պահպանման գոտիների պահպանության ապահովումը.

5) ռեկրեացիոն գոտու Էկոհամակարգերի բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը:

Տնտեսական գոտու ստեղծման նպատակներն են՝

1) պարկի տնտեսական գոտու տարածքին բնորոշ արժեքավոր բույսերի ու կենդանիների տեսակների պահպանության, վերարտադրության, Էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության վերականգնման, Էկոլոգիապես մաքուր մեթոդներով գյուղատնտեսական մթերքների արտադրության կազմակերպման, բնական պաշարների կայուն օգտագործման և պարկի ռեժիմով չարգելված այլ տնտեսական գործունեության ծավալման ապահովումը.

2) ընդերքի, ջրային ռեսուրսների, բուսական և կենդանական պաշարների արդյունավետ օգտագործման ապահովումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.

3) տնտեսական գոտու Էկոհամակարգերի բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը:

Պարկի պահպանությունն իրականացնում է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

13.«Սևան» ԱՊ տարածքի, այդ թվում շրջակա միջավայրի բնութագիրը

13.1«Սևան» ազգային պարկի ափամերձ հատվածի ռելիեֆը

«Սևան» ազգային պարկի ափամերձ հատվածի ռելիեֆը (լճի ափից մինչև 1916 մետրը) այիքավոր է և հարթ: Ափերը հիմնականում մեղմաթեք են, տեղ-տեղ զառիթափ՝ 3-8 մետր բարձրությամբ (օրինակ՝ Վարդենիկ-Արծվանիստ, Արտանիշ թերակղզու արևմտյան հատվածների ափերը): Պարկի

Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը, ինչպես նաև Սևան և Արտանիշ թերակղզիները ունեն բլրապատ, ժայռոտ և կտրտված ռելիեֆ: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության:

Արտանիշ թերակղզու կենտրոնական և արևելյան մասը, 1915-2460.8 մետր բարձրությունների միջև, պատված են լեռնազանգվածով (բացառությամբ Նրա արևմտյան մասի, որը հարթ է): Առավելագույն բարձրությունը Ադաթափա գագաթն է՝ 2460.8 մետր բարձրությամբ, որը գտնվում է թերակղզու կենտրոնական մասում: Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Այստեղ մշտական հոսող գետեր չկան՝ միայն ժամանակավոր հոսող փոքրիկ գետակներ են:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային հատվածը հիմնականում ընկած է 1950-ից 2500 մետր բարձրությունների միջև: Ռելիեֆն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Խոր ձորերով հոսում են մշտական գետերը՝ Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ:

«Սևան» ազգային պարկի տարածքը ընդգրկում է Ձկնագետ, Գավառագետ, Լիճք, Արգիչի և այլ գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի մակարդակի իջեցման և գետերի երոզիայի բազիսի իջեցման հետևանքով առաջացել են 10-6 մետր խորությամբ ձորակներ:

13.2 Կլիմա

Սևանա լճի ջրահավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են՝ արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենամեծ պատ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -36°C : Լճի հակադիր՝ Արեգունու ափին ձմեռը համեմատաբար մեղմ է, նվազագույն ջերմաստիճանը հասնում է -25°C -ի: Բարձրադիր շրջաններում 0°C -ից բարձր օրերի թիվը հասնում է 200-ի, ցածրադիր գոտիներում՝ 260 օր: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին ($+28^{\circ}\text{C}$), նվազագույնը՝ հունվար-փետրվարին: Տարվա միջին ջերմաստիճանը տատանվում է $5-6^{\circ}\text{C}$ -ի միջև:

Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75%, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Ջրի և ցամաքի հարևանությամբ ու ռելիեֆի բազմազանությամբ է պայմանավորված քամիների գերակշռությունը այս տարածքում: Քամիների միջին տարեկան արագությունը ավազանում տատանվում է 1.5-6.0 մ/վրկ:

Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված տեղանքի բարձրությունից, ավելանում են տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900մմ-ի (շրջապատի լեռների մերձագագաթային շրջանում)՝ միջինը կազմելով 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ, այդ թվում՝ մայիս-հունիս ամիսներին՝ 115 մմ: Հիմնական գարնանային առավելագույն տեղումներից բացի դիտվում է նաև երկրորդ առավելագույնը՝ աշնանայինը: Տարվա ընթացքում նվազագույն քանակությամբ տեղումներ դիտվում են օգոստոս-սեպտեմբեր և հունվար-դեկտեմբեր ամիսներին:

Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը ձևավորվում է դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

13.3 Հողային ռեսուրսներ

«Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպճային և սապրորելիտային տափաստանացված: Չգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը:

«Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդիպում են լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մետր և ավելի բարձրություններում լեռնամարգագետնային հողերի տիպերը:

13.4 Բուսական և կենդանական աշխարհ (Ներառյալ Սևանա լիճ)

Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության էքստրագոնալ տիպերը, փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքում հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ սնկեր՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինիոն սովորական (*Agaricus campestris*), շամպինիոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*) և այլն:

Գեղամա և Վարդենիսի լեռների լանջերին ներկայացված են լեռնային տափաստանային համակեցությունները (ծովի մակարդակից 1900-2200մ), որոնցում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), բարակոտնուկ սանրածև (*Koeleria cristata*), փետրախոտ տիսուր (*Stipa tirsia*) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են տրագականտային աստրագալների և ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (*Festuca valesiaca*), շյուղախոտ ոչխարային (*Festuca ovina*), բոշխ ցածր (*Carex humilis*), դաշտավլուկ մարգագետնային (*Poa pratensis*) և այլ տեսակները:

Ծովի մակարդակից 2300մ-ից բարձր բուսականության բնույթն աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրածև (*Koeleria cristata*), դաշտավլուկ ալպյան (*Poa alpina*), գարի մանուշակագույն (*Hordeum violaceum*), բրոմոպսիս խայտաբղետ (*Bromopsis variegata*), քոսքոսիկ կովկասյան (*Scabiosa caucasica*), ոճևախոտ կծկավոր (*Dactylis glomerata*), զանգակ խմբված (*Campanula glomerata*), թթվիճ խոշորածաղիկ (*Betonica macrantha*), երեքնուկի (*Trifolium*) տարբեր տեսակներ և այլն: 2700-3200 մ բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են զանգակ եռատամ (*Campanula tridentata*), խատուտիկ Սոսենի (*Taraxacum stevenii*), բերենիկե բոգային (*Veronica gentianoides*), շյուղախոտ

ոչխարային (*Festuca ovina*), բոշխ տխուր (*Carex tristis*) և մի շարք այլ տեսակներ: Թփուտները կազմված են հիմնականում մասրենու (*Rosa spinosissima*, *R. canina*) և ասպիրակի (*Spiraea crenata*) տեսակներից: Մարգագետնատափաստանային բուսականության հետ մեկտեղ տարածված են արևելյան կաղնու (*Quercus macranthera*) մնացորդային կաղնուտները և չորասեր թփերի ու տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ գիհու նոսրանտառները, գիհի բազմապտուղը (*Juniperus polycarpus*) և գիհի երկարավունը (*J. oblonga*):

Սևան ազգային պարկի ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով: Լճաշենի լճախորշից թերակղզի ընկած հատվածում Սևանա լճից ջրագատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի /*Pinus kochiana*), բարդի (*Populus*), չիչխան դժնիկանման-*Hippophae rhamnoides*), որոնց զգալի մասը Սևանա լճի մակարդակի բարձրացման դեպքում կմնան ջրի տակ:

Ընդ որում Լճաշեն-Թերակղզի տարածքում 1900,5մ-ից 1901,5մ նիշն ընկած հատվածում անտառածածկ տարածքը 24,38 հա է, իսկ 1901.5-1903.5մ նիշն ընկած հատվածում անտառածածկ տարածքը կազմում է 50.42հա: Թերակղզու հատվածում ծառատեսակներից գերակշռում է բարդին, Լճաշենի հատվածում՝ սոճին (*Pinus kochiana*): Սոճու մեծ կուտակումներ են առկա Լավանդա Սիթիի տարածքում, որոնց մի մասը մնացել է ջրի տակ, իսկ մյուս մասը հատվել է սանիտարական խնամքի նպատակով: Բացի այս հիմնական ծառատեսակներից հանդիպում են նաև եզակի ծառեր՝ կեչի (*Betula*), եղևնի, ուռնի, իսկ թփերից նաև դեղին Ակացիան- *Caragana treelike*: Ջրածածկ եղած ծառեր կան նաև Նախկին հիվանդանոցի տարածքում: Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում՝ արոսենու (արոսենի Կուզնետովի (*Sorbus kuznetsovii*), արոսենի, ծտախնձոր (*S. aucuparia*), արոսենի Հայաստանի (*S. hajastana*), արոսենի հունական, ասպար (*S. graeca*), մասրենու (*Rosa spinosissima*, *R. canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus orientalis*), ուռնենու (*Salix caprea*) և մի շարք այլ թփատեսակների համակցությունները: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ), որոնց զգալի մասը, Սևանա լճի մակարդակի ենթադրվող բարձրացման դեպքում, կմնա ջրի տակ:

Ջրային բուսականություն. անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, կան երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Չոլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա տարածքներում կան ոչ մեծ ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (*Carex hirta*), դուն երկար (*Cyperus longus*), դուն թուխ (*C. fuscus*), ճլախոտ թաբերնեմոնթանի (*Schoenoplectus tabernaemontani*) և շատ այլ տեսակներ:

Կենդանական աշխարհ.«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խիունջներին և լորձնամոյլուսկներին, և Հողվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր) կենդանիների ցանկին:

Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից 6-ը՝ Հայաստանի Էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որն հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Հանդիպում են երկկենցաղների 4 տեսակները, որոնք պատկանում են Ցատկողներ (*Salientia*) կարգին՝ լճագորտ (*Rana ridibunda*), փոքրասիական գորտ (*Rana macrocnemis*), կանաչ դողոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkovnikovi*):

Սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսների (*Lacertilia*) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (*Serpentes*) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (*E.a.transcaucasica*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*):

Կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

Միջատակերներ (*Insectivora*) - 7 տեսակ.

Կրծողներ (*Rodentia*) - 15 տեսակ.

Նապաստակներ (*Logomorpha*) - 1 տեսակ.

Չղջիկներ (*Chiroptera*) - 7 տեսակ.

Գիշատիչներ (*Carnivora*) - 11 տեսակ.

Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (*Artiodactyla*) - 3 տեսակ:

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակզաքիսը, անտառային կատուն, բեզարյան այծը):

Սևանա լճի ձկները ներկայացված են. սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (*Sevan Trout-Salmo ischchan* Kessler 1877) իր 4 Էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (*S. ischchan aestivalis*), Ձմեռային բախտակ (*S. ischchan ischchan*), Գեղարքունի (*S. ischchan gegarkuni*), Բոջակ (*S. ischchan danilewskii*):

Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (*Whitefish - Coregonus lavaretus*):

Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու Էնդեմիկները՝ Սևանի կողակը (*Khrami carp-Varicorhinus capoeta sevangi*) և Սևանի բեղլուն (*Sevan barble-Barbus goktschaicus*): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (*Crucian carp-Carassius auratus gibelio*), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից:

Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված են. Սևանա լճի երկու Էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղուն:



Նկար 14. Ամառային բախտակ (Սևանի իշխանի անհետացող, տռեղային տարածվածություն ունեցող Էնդեմիկ ենթատեսակ)



Նկար 15. Սեվանի բեղուն

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին՝ սուզակներ (Podicipediformes)-7 տեսակ, ձկնկուլ (Pelecaniformes)-4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, գիշատիչներ (Falconiformes) - 30 տեսակ, սագեր, բադեր, կարապներ (Anseriformes) - 28 տեսակ, հավազգիներ (Galliformes) - 3 տեսակ, կռունկ, փարփար (Gruiformes) - 9 տեսակ, որոր, կոցար, քարադր (Charadriiformes) - 49 տեսակ, աղավազգիներ (Columbiformes) - 4 տեսակ, կկուներ (Cuculiformes) - 1 տեսակ, բու (Strigiformes) - 3 տեսակ, այծկիթ (Caprimulgiformes) - 1 տեսակ, մանգաղաթևեր, ծիծեռնակներ (Apodiformes) - 5 տեսակ, մեղվակեր, հոպոպ:

Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կռնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

Վերջին տարիներին սկսել է վերականգնվել Սևանա լճի թռչնաշխարհը:

Համաձայն UMDP զեկույցի (2014թ.)՝ ջրի մակարդակի բարձրացման հետևանքով ավամերձ գոտիներում առաջացած ծանծաղուտների շնորհիվ բարելավվել են մի շարք թռչնատեսակների (սպիտակ փոքր տառեղ-Egretta garzetta, դեղին տառեղ-Ardeola ralloides, կվակվա-Nycticorax nycticorax, քաջահավPlegadis falcinellus, կոցարներ-Haematopodidae) կենսապայմանները և վերականգնվել են կերահանդակները: 60 տարվա



Նկար 16. Մեծ ձկնկույլ

բացակայությունից հետո այստեղ նորից սկսել է բնադրվել մեծ ձկնկույլը (*Phalacrocorax carbo*):

2013 թ. ձմեռային հաշվառման ընթացքում գրանցվել է ջրլող թռչունների մեծ քանակություն, մասնավորապես սև փարփարի (*Fulica atra*) և կարմրակտուլց սուզաբադի (*Netta rufina*): Դրա հետ մեկտեղ նկատվում է այն տեսակների քանակական նվազումը, որոնք առավելապես կապված են ափամերձ գոտու հետ:



Նկար 17. Հայկական որոր

Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված են 39 թռչնատեսակներ: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (*Larus armenicus*) Էնդեմիկ տեսակ է:


13.5 Հատուկ պահպանվող տարածքներ:

Հիմնադրությամբ փաստաթղթի դրույթներով կարգավորվում է Սևան ազգային պարկի Լճաշեն Սևան հատվածի տարածքների գոտևորումը:

13.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ:

«Սևան» ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված են պատմական, մշակութային և բնական 1489 հուշարձան:

Նկար 18.



Վիշապ, վիշապներ, վիշապաքարեր-մեգալիթյան հուշարձան, քարակոթող, մեկ կտոր քարից, ներհատուկ է լոկ Հայկական լեռնաշխարհին: Հայտնի են «Վիշապաքար» անունով: Խորհրդանշել են տարերքի անսանձ ուժը, բնության զարթոնքը, պտղաբերություն, առատություն: Վիշապների մոտ 150 օրինակ է հայտնի այսօր, որոնցից 90-ը Հայաստանի Հանրապետության տարածքում: Վիշապաքարերն ունեն 150-550 սմ բարձրություն, պատրաստված են բազալտից և ըստ ձևի ու պատկերագրության բաժանվում են երեք տիպի՝



1. ցլակերպ (քառակող, հաստ սալաքարի տեսքով, դիմային մասում հիմնականում ցլի գլխի և վար ընկած վերջույթների պատկերով),
2. ձկնակերպ (կտրվածքում կլորավուն, քանդակված ձկան տեսքով՝ կրելով ձկան անատոմիական մանրամասներ),
3. ձկնացլակերպ (կրում է նախորդ երկուսի հատկանիշները):

Վիշապաքարերի մեծ մասը գտնվում է իր սկզբնական տեղում՝ հորիզոնական դիրքով ընկած: Սակայն երեք տիպերն էլ մշակված և քանդակված են բոլոր կողմերից, բացի «պոչից», ինչն ակնհայտորեն վկայում է այն մասին, որ վիշապաքարերը նախապես եղել են կանգնած վիճակում: Հայաստանում հեղամա լեռներում, Սևանա լճի հյուսիս-արևելյան ափին, Արագածի լանջերին, Գառնիում, Ճորոխ գետի ավազանում և այլուր հայտնաբերվել են Վիշապների պաշտամունքին նվիրված հնագույն բազմաթիվ քարակոթողներ: Ենթադրվում է, որ վիշապները ջրի պաշտամունքին վերաբերող հուշարձաններ են, որոնք սերտորեն կապվում են ջրաբաշխման գործի հետ: Համարյա բոլոր վիշապների գտնված վայրերը կապված են լեռնային աղբյուրների կամ ջրանցքների հետ: Նման ոռոգման համակարգեր են հայտնաբերվել, Սևանի Արտանիշ ծովածոցի, Արագած լեռան վրա՝ Արշախեն գետի աջ ափի և հեղամա լեռների թոխմակագան գյուղի և հեմերգեկ բնակավայրերի մոտ: Չնայած ոռոգման համակարգի կառույցները հնարավոր չէ ճիշտ թվագրել, բայց գիտնականները վիշապները կապում են հին շրջանի պտղաբերության և ջրի պաշտամունքի հետ: «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ -ի պահպանության գոտում տեղակայված են՝ Արտանիշ ծովածոցում, հեղամա լեռներում «Քարե ձի» կոչվող բնակավայրում:

Հուշարձանը գտնվում է ՀՀ հեղաբեկիցի մարզի Մարտունի և Այգուտ գյուղերի միջև, Մարտունի գյուղից մոտ 6 կմ հյուսիս-արևմուտք, Այգուտ գյուղից 3 կմ հյուսիս-արևելք: Ամրոցը տեղադրված է Մուրղուզի լեռնաշղթայի հարավային փեշերին, հեղաբեկիցի աջ ափին, Աղջաղալա կոչվող գյուղատեղիից (այստեղ պահպանվել են շինությունների և եկեղեցու մնացորդներ, խաչքարեր) 1 կմ հարավ-արևմուտք, «Կարմիր եղջի» կամ Հին հեղաբեկի վանքի հյուսիսային տեսադաշտի դիմաց վեր խոյացող Աղջաղալա լեռան գագաթին: Մատչելի է Այգուտ և Մարտունի գյուղերից դեպի սարահարթ տանող ճանապարհով, ապա ամրոցի բարձունքը ոտքով հաղթահարելով: Դոյակը շարված է տեղական, սպիտակավուն երանգ ունեցող կրաքարի ճեղքված բեկորներով ու կրաշաղախով: Հուշարձանը ներքուստ ամբողջովին լցված է փլատակներից առաջացած քարակույտերով և ներքին հատակագծային տեսանելի որոշակիություն չունի: Հուշարձանի համատեքստում պահպանվել են նույն անունը կրող ընդարձակ բնակատեղիներ՝ 13-14-րդ դդ. եկեղեցու ավերակներով և մի քանի գերեզմանոցներով, որոնց հուշակոթողների թվագրությունը ևս



վերաբերում է 10-14-րդ դդ.:

Ամրոցը գտնվում է գյուղի արևմտյան ծայրամասում եղած բարձունքի հարավային լանջում: Գրավում է մոտ մեկ հեկտար տարածություն (150X65 մետր): Նրա ներսում ու դրսում նկատելի են կացարանների հետքեր: Ամրոցի պարիսպների լայնությունը երեք մետր է, կացարանների պատերը ավելի նեղ են, չնայած կառուցման տեխնիկան նույնն է: Ամրոցի մակերեսը պատերով բաժանված է երեք մասի, որից երկուսը հավասար մեծություն ունեն, մեկը ավելի մեծ է և գրավում է բարձունքի առավել բարձր մասը ու հավանաբար միջնաբերդի դեր է խաղացել, իսկ մյուս երկուսը եղել են որպես թաղամասեր, որոնք ընդհանուր պատնեշով միացվել են միմյանց հետ: Ամրոցի մուտքը եղել է նրա արևելյան մասում: Չնայած ամրոցի տարածքում կան խեցեղենի մանր բեկորներ, սակայն նրանց միջոցով որոշել ամրոցի ժամանակաշրջանը անհնար է: Միայն պարիսպները, որ շարված են կոպիտ, անտաշ, ճեղքված բազալտ ժայռաբեկորներից, առանց միացնող շաղախի և մանր քարերի լիցքի, ենթադրել են տալիս, որ այս ամրոցը ավելի վաղ ժամանակների կառույց է, թերևս II դ. հազարամյակի առաջին կեսի (մ. թ. ա.): Ամրոցից դեպի հարավ, բարձունքի ստորին լանջերը և ստորուղծ ծածկված են միջնադարյան հայկական գերեզմաններով, իսկ նրանից էլ դեպի հարավ, Սևանա լճի ցամաքած մասում հայտնաբերվեց մի մեծ դամբարանադաշտ, որը, մեր կարծիքով, կարող է առնչվել ամրոցի ժամանակաշրջանի հետ: Ամրոցից դեպի հյուսիս, մեկ ու կես կիլոմետր հեռու գտնվող սարահարթի վրա, որը ավելի բարձր է, քան նշված ամրոցը, պահպանվել է մի առանձին կիկլոպյան կառույցի հետք: Այս կառույցը հավանորեն եղել է դիտակետ: Այն ունի կիսաշրջանաձև, երկու մետր լայնությամբ, ավելի մանր քարերով շարված պատեր, որոնց երկու ծայրերը միանում են հյուսիս-արևելյան կողմից բարձրացող անառիկ ժայռաբլրին: Պատերից պահպանվել է միայն մի շարը: Կառույցը ունի 55x35 մետր մակերես: Ամրոցի, ինչպես նաև դիտակետի շրջակայքում, ջուր չկա:



Կառուցված է մի ժայռոտ բլրի վրա, որը հյուսիսից նայում է Սևանա լճին, տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղից մոտ 1,5 կմ արևմուտք, Արծվանիստ գյուղի արևելյան մատույցներում: Առավել մատչելի է Ծովինար գյուղի միջով դեպի Արծվանիստ տանող հին ճանապարհով: Ամրոցի բլրի հարավ-արևմտյան մասում, Ծովինար-Արծվանիստ ճանապարհից անմիջապես ձախ՝ քարաժայռի ճակատին գտնվում է Վանի թագավորության տիրակալ Ռուսա I-ի (Զ.ա. 735-713 թթ.) արձանագրությունը: Համաձայն արձանագրության՝ Ռուսա I-ը նվաճել է այստեղ գոյություն ունեցած ամրոցը, նույն տեղում վերակառուցել է այն և անվանել Թեյշեբաինի ամրոց: Ինչպիսիք, տեղում հստակորեն կարելի է նկատել, որ այստեղի ամրաշինական համակարգը կազմող որոշ էլեմենտներ (աշտարակներ, պարսպապատեր, պատեր) վերակառուցված են, կամ էլ հավելված են չթրծված աղյուսով շարված կոնստրուկցիաներով: Ամրոցի և հատկապես միջնաբերդի գլխավոր պարիսպները և քարաբուրգերը նույնպես վերակառուցված են, նրանց արտաքին երեսները շարված են տաշված և ողորկ կողմերը դեպի դուրս ուղղված քարերով: Թեյշեբաինին, 24 գործնականում, Սևանի ավազանում Վանի թագավորության շրջանին պատկանող ամրոցներից այսօր ամենալավ պահպանվածն է, որը հանդիսացել է լճի հարավային ափի ամենահուսալի ուրարտական հենակետը, ինչպես Ուելիքուխի երկրի «Խալդի քաղաքը» կամ Գավառի Բերդի գլուխ ամրոցը Գավառագետի ավազանի համար:



Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա գյուղից հյուսիս-արևելք՝ համարյա նրա վերջավորության մոտ, Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհից ձախ, նրա անմիջական հարևանությամբ: Ձևավորվել է ջրային էրոզիայի արդյունքում՝ հանդիսանալով գործնականում Սևանա լճի ափամերձ մասը մինչև լճի մակարդակի իջեցումը:



Լճաշենի ամրոց-բնակատեղին գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի հարավային ծայրամասում բարձրացող բլուրների վրա և զբաղեցնում առավել քան 35.0 հա տարածք: Տարածվում է 15 բլուրների, նրանց լանջերի ու ձորակների վրա: Ամրոցն իր դիրքով 50-100 մ հարաբերական բարձրությամբ իշխում է շրջակայքի վրա: Ամրոցի և բնակատեղիի արտաքին պարիսպների ընհանուր երկարությունը հասնում է շուրջ 5000 մետրի: Տարածքը և շրջակայքը խիստ քարքարոտ է, ծածկված կացարանների մնացորդներով: Լճաշենի ամրոցն ունի 2 միջնաբերդ և 22 մանր ու խոշոր քարաբուրգեր ու աշտարակներ: Ամրոց-բնակատեղին շրջապատող բարձր ու լայն պարիսպները կառուցված են բազալտի խոշոր ժայռաքեկորներից, որոնք անտաշ են, սակայն պարսպի որմերում հարմարեցված են այնպես, որ դրանց հարթ կողմերը նայում են դուրս: Պարսպի լայնությունը միջինում 3,5 մ է, իսկ խոցելի տեղերում և միջնաբերդի մուտքերի մոտ հասնում է 5 և ավելի մետրի: Լճի նահանջից հետո այստեղ պեղվել են թվով 430 դամբարաններ և 31 դամբարանաբլուրներ, որոնք տրամադրել են Ք.ա. IV հազարամյակից մինչև Ք.ա. II հազարամյակի երկրորդ կեսերին վերաբերվող նյութական մշակույթի մնացորդներ: Վաղ շրջանի թաղումները (Ք.ա. IV — III հազարամյակներ) ներկայացված են քարարկղային և վերգետնյա թաղումներով, Ք.ա II հազարամյակի առաջին կեսի թաղումները՝ հիմնահողային խցերով են: Ք.ա II հազարամյակի երկրորդ կեսի թաղումները հիմնականում, կրկին, դառնում են քարարկղային: Լճաշենի հնագիտական ուշագրավ հուշարձանների շարքում է նաև Վանի թագավորության Արգիշտի I արքայի թողած սեպագիր արձանագրությունը: Այս արձանագրության մեջ Արգիշտի I-ը պատմում է դեպի Սևանա լճի ավազանը կատարած իր արշավանքի և Իշտիկունի քաղաքի գրավման մասին, որն էլ, հավանաբար, հենց Լճաշենի ամրոց-բնակատեղին է: Արձանագրությունն արված է ժայռաքեկորի վրա, որը նախկինում, մինչև լճի ջրերի իջեցումը եղել է ափամերձ գոտի և նայել է դեպի լիճը, իսկ այժմ գտնվում է գյուղի կապի բաժանմունքի հարևանությամբ: Արձանագրությունը, լինելով Վանի թագավորության վիմագրական տարեգրության մի փայլուն օրինակ, լրացնում է Լճաշեն գյուղի հնագիտական հուշարձանների ուշագրավ համալիրը և լույս սփռում Գեղարքունիքի հնագույն պատմության իրադարձությունների վրա ընդհանրապես:



Լճաշենի «քարե ծով» շինգիլներ...



13.7. «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ «ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ» ՀԱՏՎԱԾԻ (Սևանա լիճ) ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սևանա լճի նշված հատվածի հիմնական մասը կազմում է Լճաշենի լճախորշը: Վերջինս զբաղեցնում է բավականին մեծ, մոտ 6 կմ² տարածք: Լճախորշում ջրի դանդաղ շրջապտույտի և ինտենսիվ տղմակուտակման հետևանքով նկատվում է մակրոֆիտների առատություն: Ջրային բույսերի մացառուտները ստեղծում են հատուկ միջավայր անողնաշարավոր կենդանիների համար, փոփոխելով այնպիսի կարևոր պայմաններ, ինչպիսիք են՝ լուսավորվածությունը, pH, թթվածնի պարունակությունը, ջերմաստիճանը: Մակրոֆիտային մացառուտներն աչքի են ընկնում հիդրոբիոտների բարձր տեսակային բազմազանությամբ, թվաքանակով, կենսազանգվածով և կենսաարդյունավետությամբ: Մակրոֆիտները ստեղծում են յուրահատուկ ֆիլտր ջրամբարի և ջրհավաք ավազանի միջև և ծառայում են որպես բուֆերային գոտի: Կլանելով կենսածին տարրերի զգալի քանակություններ, ջրային բարձրակարգ բույսերը նվազեցնում են վնասակար ջրիմուռների «ծաղկման» հնարավորությունները, նպաստում են կախույթային և օրգանական նյութերի նստեցմանը, և ծանր մետաղներից ջրի մաքրմանը: Ծանծաղ լճախորշերում առաջնային արդյունավետության ստեղծման գործում մակրոֆիտներն ունեն ոչ պակաս դեր քան ֆիտոպլանկտոնը: Լճաշենի լճախորշում մակրոֆիտների պրոյեկտիվ ծածկույթը 2019թ. կազմել է 90%: Հիդատոֆիտ տեսակներից գերիշխել է *Ceratophyllum demersum* (L.) տեսակը, որն առաջացրել է մոնոդոմինանտ համակեցություններ: Լճախորշն ամբողջովին երիզված է վերջրյա հելոֆիտ մակրոֆիտների խիտ շերտով, այստեղ գերիշխել են *Fragmites australis* (Cav.) Trin. Ex Steud., *Typha angustifolia* (Linnaeus), *Schoenoplectus tabernaemontani* (C.C.Gmel.) (Palla.) տեսակները, *Fragmites australis* տեսակը հուլիս ամսին առաջացրել է խիտ և համատարած բուսուտներ, որոնք աճման շրջանում իրենց մեջ կուտակելով կենսածին տարրեր, քայքայման շրջանում դրանք անջատում են ջրի մեջ՝ ազդելով ջրի հիդրոքիմիական և հիդրոլոգիական ռեժիմի, ինչպես նաև ջրի որակի ձևավորման վրա: Հուլիս ամսին լուծված թթվածնի քանակի կտրուկ նվազումը (2.4մգ/լ) պայմանավորվել է լճի ծաղկումից հետո հատակին նստած ջրիմուռների քայքայման պրոցեսով:

Համաձայն Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվության՝ Մակրոֆիտների առատությամբ և հանդիպման հաճախականությամբ Լճաշենի խորշում հաշվետու ժամանակահատվածում (2019-2020թթ) աչքի է ընկել *Fragmites australis* հելոֆիտ տեսակը, իսկ հիդատոֆիտներից *Ceratophyllum demersum* տեսակը: 2019թ. գարնանը, լճախորշի ափամերձ հատվածի (1-1.5մ խորություն) հատակային ֆաունան աչքի է ընկել տեսակային բազմազանությամբ: Աղտոտվածության նկատմամբ զգայուն միօրիկները (Ephemeroptera) և թավաթևերը (Trichoptera) բացակայել են: Ամռանը, ափից ավելի հեռու հատվածներում, որտեղ հատակի բնահողը տղմավազային է և բուսականությունը գրեթե բացակայում է, տեսակային բազմազանությունը եղել է ավելի փոքր, իսկ կենսազանգվածը 56 անգամ քիչ՝ քան գարնանը ընտրված դիտակետում: Պատճառը լճի «ծաղկումն է», ինչպես նաև ծաղկմանը հաջորդող ջրիմուռների քայքայման գործընթացը: Ջրի որակը համապատասխանել է «միջի» դասին: Ավելի մեծ խորություններում ջրի որակը համապատասխանել է «միջինից ցածր» դասին: 2019թ. ամռանը Լճաշենի լճախորշի բաց ջրային հատվածում (2-10 մ խորություն) գրանցվել է զոոբենթոսի կենսազանգվածի մոտ 10

անգամ նվազում գարնան տվյալների համեմատ: 2020 թվականի ամռանը զոոբենթոսի կենսազանգվածի արժեքը եղել է գրեթե նույնը, ինչ նախորդ տարվա ամռան ցուցանիշը և 5.6 անգամ ավելի փոքր, քան գարնան նույն դիտակետի ցուցանիշը: Ընդ որում, կողալողերի կենսազանգվածը եղել է ավելի բարձր, քան 2019թ. գրանցված բոլոր արժեքները: Կտրուկ նվազել է փորոտանի փափկամարմինների (Gastropoda) քանակը և կենսազանգվածը (աղ.2, 3), ինչը, հավանաբար, ապրելավայրերի պամանների վատացման հետևանք է:

Ձկնաբանական հետազոտություններ

Համաձայն Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվության՝ Սևանա լճի լճախորշերում իրականացված ձկնաբանական հետազոտությունների արդյունքում լճում հանդիպող 8 ձկնատեսակներից հայտնաբերվել են 6-ը, որոնք պատկանում են ծածանազգիների ընտանիքին: Լճաշենի լճախորշում հանդիպել են Արծաթափայլ կարասը (*Carassius auratus gibelio* Bloch., 1783)՝ 90% և Ամուրյան նրբաձկնիկը (*Pseudorasbora parva* Temminck et Schlegel, 1846)՝ 10%:

Սևանա լճի հետազոտված լճախորշերում հանդիպել են արծաթափայլ կարասի 1+, 2+, 3+ և 4+ տարիքային խմբերը, վերջինս վկայում է այն մասին, որ լճախորշերը հանդիսանում են արծաթափայլ կարասի բնակվելու և բազմանալու կենսամիջավայր: Հետազոտված կարասների մոտ հայտնաբերվել է *Ligulidae* ընտանիքին պատկանող *Ligula intestinalis* մակաբույծներ: Վարակվածության էքստենսիվությունը կազմել է 5 %:

Լճաշենի լճախորշը բազմանալու և բնակվելու կենսամիջավայր է հանդիսանում նաև ամուրյան նրբաձկան համար, քանի որ այստեղ հանդիպում են նրբաձկան ինչպես ոչ սեռահասուն, այնպես էլ սեռահասուն առանձնյակները:

Հիդրոբիոլոգիական հետազոտություններ

Աղյուսակ5.

Լճաշենի լճախորշի որոշ հիդրոբիոլոգիական ցուցանիշներ 2019-2020թթ.
(Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվություն)

| N | Ցուցանիշ | | 2019 | | 2020 | | | ՍԹԿ |
|---|------------------------------------|-----|--------|--------|-------|--------|--------|---------|
| | | | հունիս | հուլիս | մայիս | հունիս | հուլիս | |
| | Ջերմաստիճան (°C) | | 22 | 20 | 16 | 19 | 23 | |
| | Ջրածնային ցուցիչ (pH) | | 8,4 | 8,5 | 8,13 | 8,7 | 8,2 | 6,5-8,5 |
| | Լուծված թթվածին (մգ/լ) | գ/լ | 6,8 | 2,4 | 6,0 | | | ≥6 |
| | ԹԿՊ ₅ (մգ/լ) | | 0,1 | 0,3 | | | | 3.0 |
| | Պերմանգանատային օքսիդացում (մգO/լ) | | 6,0 | 6,8 | | | 6,3 | 5 |
| | Ամոնիում իոն (մգ N/լ) | | 0,10 | 0,27 | 0,50 | 0,10 | 0,26 | 0,39 |
| | Նիտրատ իոն (մգN/լ) | | 0,24 | 0,18 | 0,50 | | 0,57 | 9,0 |
| | Նիտրիտ իոն (մգN/լ) | | 0,007 | 0,005 | 0,01 | 0,01 | 0,006 | 0,02 |
| | Ֆոսֆատ իոն (մգP/լ) | | 0,06 | 0,009 | 0,22 | 0,05 | 0,026 | 35 |


Լճախորշից մինչ թերակղզի ընկած տարածքում, լճի անմիջական ազդեցության գոտում առկա են բազմաթիվ հանգստյան տներ և սննդի օբյեկտներ: Որտեղից կոշտ կենցաղային թափոնները և հոսքաջրերը լցվում են Սևանա լիճ: Թեպետ կշված կառույցների մի մասն ունի մաքրման կայաններ, սակայն դրանք գրեթե չեն գործում, իսկ խոշոր օբյեկտների միջև տեղադրված փայտե տնակների հարևանությամբ կառուցված կոյուղահորերը, լուրջ վտանգ են ստորգետնյա ջրերի համար: Նույնատիպ հորեր են կառուցված նաև Սևանի ավազանի գրեթե բոլոր համայնքներում, քանի որ Գեղարքունիքի մարզի բնակավայրերի մեծ մասում բացակայում են կոյուղու ցանցերը:

Ռեկրեացիոն գոտու ծանրաբեռնվածությունը պարզելու և լճի վրա վերջինիս ազդեցությունը գնահատելու համար 2019-2020 թվականներին իրականացվել են մանրէաբանական հետազոտություններ:

Վերոհիշյալ տարածքը հանդիսանում է ռեկրեացիոն գոտի և ամռան ամիսներին հյուրընկալում է հազարավոր հանգստացողների:

Նկար 19.

Հանրային լողափերի և հանգստյան տների բաշխվածությունը «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածում



Աղյուսակ 6.

Կողի-ինդեքսը Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերում 2019թ.

| Լողափ | Հուլիս ԳԱՄ/լ | Օգոստոս ԳԱՄ/լ |
|-------------|-----------------|------------------|
| N1 Հանրային | 50 | 250 |
| N2 Հանրային | 25 | 1000 |
| N3 Հանրային | 100 | 400 |

Հանգստի առավել ակտիվ շրջանում՝ օգոստոսի առաջին տասնօրյակում, հուլիս ամսվա համեմատ՝ հետազոտված լողափերի ջրերում գրանցվել է կոլի-ինդեքսի արժեքի բարձրացում՝ 100-1000 ԳԱՄ/լ: Առավել բարձր արժեք արձանագրվել է N2 հանրային լողափում: Համաձայն ռեկրեացիոն ջրօգտագործման մանրէաբանական նորմերի հիգիենիկ պահանջի (СанПиН 2.1.5.980-00)՝ ընդհանուր կոլիֆորմ մանրէների քանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/100մլ:

2019թ. ռեկրեացիոն գոտիների ջրերում կատարված հետազոտությունների արդյունքների համաձայն՝ շեղումներ չեն արձանագրվել: 2020թ. հանգստի առավել ակտիվ շրջանում՝ օգոստոսի առաջին տասնօրյակում Փոքր Սևանի հիմնական լողափերի (Հանրային N 1, N 2, N 3) ջրերում լակտոզադրական ադիքային ցուպիկների ինդեքսը փոխվել է 100-1000 ԳԱՄ/լ սահմաններում:

Ռեկրեացիոն գոտին, հատկապես առանձին ձեռներեցների տարածքները տարանջատող հատվածները, աղտոտված են կոշտ կենցաղային թափոններով, որոնց հիմնական մասը օրգանական սննդի մնացորդներ են և պլաստիկ շշեր: Աղբահանության հարցը լավ չի կազմակերպվում, իսկ երբեմն աղտոտումը ցրված բնույթի է:

14. Հիմնադրության փաստաթղթով նախատեսված գործունեությունների տեխնիկական և տեխնոլոգիական լուծումների ընդհանուր բնութագրերը

Հիմնադրության փաստաթղթի դրույթներով նախատեսվում է հետևյալ կարգավորումները և լուծումները:

14.1. Ծովափնյա ճեմուղի.

Ծովափնյա ճեմուղին նախատեսվում է, որպես նախագծվող տարածքում կառուցապատումը կարգավորող և կառուցապատման ուղղությունը թելադրող առանցք: Այն սկսվում է Լճաշենի հատվածում 1905.0 նիշի հորիզոնականի և Մարտունի տանող ճանապարհի հատման կետից: Ճեմուղու այս մասը սկսվում է ոչ մեծ հանրային հրապարակով, որտեղ կձևավորվի առևտրի կենտրոն և կանաչ պուրակ: Հրապարակում կլինեն նաև ավտոկայանատեղի, սրճարան և այլ անհրաժեշտ օբյեկտներ:

Ճեմուղու ուղեգիծը հիմնականում անցնելու է 1905.0 նիշի հորիզոնականով, կրկնելով ափի նկարվածքը, այն հատվածներում, որտեղ 1905,0 նիշը շատ է հեռվանում ջրից, ճեմուղին՝ պահպանելով իր նիշը (1905,0մ) կմոտեցվի ջրին սյուների վրա իրականացված կոնստրուկցիաների միջոցով:

Ճեմուղու առաջին հատվածը վերը նկարագրած կետից մինչև Հրազդան գետի ակունքը՝ մոտ 6,0 կմ, Հրազդան գետի ակունքից մինչև թերակղզի՝ 3.15 կմ: Առաջին հատվածի լայնությունը՝ միջինը 10.0 մ, երկրորդինը՝ 5.0 մ:

Կառուցապատված հատվածներում ճեմուղին իրականացվելու է կանոնավոր սալիկներով (բազալտ, գրանիտ, տուֆ, այլ), ծառապատ հատվածներով կամ այգեպուրակներով անցնելիս՝ անկանոն սալաքարերով, գետաքարով, իսկ սյուների վրա

իրականացված հատվածներում՝ տախտակամածով (բնական փայտից կամ կոմպոզիտ նյութերից):

Որոշ հատվածներում, ռելիեֆով պայմանավորված, անհրաժեշտ կլինի կառուցել հենապատեր: Նշվածը մի կողմից կլինի կոնստրուկտիվ անհրաժեշտություն, մյուս կողմից կներգծվի ճեմուղու նախագծում որպես լրացուցիչ գեղարվեստական տարր: Ճեմուղու և ճանապարհի աշխատանքային նախագծերի մշակման համար իրականացվել են որոշ հատվածների ինժեներաերկրաբանական հետազոտման աշխատանքներ:

Ճեմուղու և ջրի միջև ընկած հատվածում կկազմակերպվեն հանրային լողափեր, կտեղադրվեն անհրաժեշտ կահավորանքը, ջրային տրանսպորտի պահպանման և վարձույթի կետերը:

Ծովափնյա ճեմուղու մակերեսը առաջին հատվածում՝ 58693.3մ² է, երկրորդ հատվածում՝ 15730.10 մ²:

Ծովափնյա ճեմուղուն զուգահեռ, գրեթե իր ամբողջ երկայնքով նախատեսվել են ևս երեք հանրային գոտի՝ հեծանվուղի՝ 2,5 մ լայնությամբ, ճեմուղին և հեծանվուղին բաժանող կանաչ շերտ՝ 3,0-ից-4.0 մ լայնությամբ և հեծանվուղու և կառուցապատման գծի միջև առնվազն 4.0 մ լայնությամբ մայթ:



Ճեմուղուն զուգահեռ ձգվող գծային կանաչ բաժանիչ շերտում նախատեսվում է ստեղծել ծառուղիներ, կազմված խոշոր ծառատեսակներից՝ թխկի, գիհի, եղևնի, սոճի և այլն, ընդ որում՝ առանց ընդմիջումների հատվածներում կլինեն միատեսակ ծառեր: Ծառուղին, ինչպես նաև երկրորդ շարքով նախատեսվող թփերի կանաչ շերտերը կծառայեն որպես քամապաշտպան պատնեշներ: Բաժանիչ կանաչ շերտի մակերեսը կազմելու է 26701.14 մ²:

Կանաչ շերտից հետո նախատեսվել է երկկողմանի շարժումով հեծանվուղի, որը կապված է լինելու զբոսայգիների, քրթեջային և կառուցապատման այլ գոտիների



Նկար 20.



Նկար 21.

հեծանվուղիների հետ: Կնախատեսվեն նաև հեծանիվների վարձույթի կետեր և կայանատեղեր: Ծածկույթը կիրականացվի մանրհատիկավոր ասֆալտով և կառանձնանա իր գույնով:

Ճեմուղուն զուգահեռ հիմնական հեծանվուղու մակերեսը կազմելու է 22250.95մ²: Հիմնական ճանապարհների լայնությունը՝ 22.2 մետր է, այդ թվում երթևեկելի մասը՝ 15,2մ, բաժանիչ շերտերը՝ 1,5մ, մայթերը՝ 2,0մ, երկարությունը՝ 4936.81մ:

Երկրորդական ճանապարհների ընդհանուր լայնությունը, այդ թվում մայթեր և բաժանիչ շերտեր՝ երկկողմանիի դեպքում՝ 21.5 մ , միակողմանիի դեպքում՝ 14,5 մ:

Ճանապարհները կիրականացվեն ասֆալտե ծածկույթով, մայթերը բազալտե եզրաքարերով և սալիկներով, թեք հատվածներում, ըստ անհրաժեշտության՝ գետաքարերով (булыжник):

14.2 Չբոսայգիներ, պուրակներ, կանաչապատ գոտիներ և այլ բաց տարածքներ

Չբոսայգիները (1-6 գոտի՝ 104686մ² ընդհանուր մակերեսով), պուրակները, կանաչապատ հետիոտնի անցումները, մանկական խաղահրապարակները, ճանապարհային կանաչապատումը և հրապարակները նախատեսվել են որպես բարեկարգ հանրային տարածքներ, որոնք կլինեն միմյանց հետ շփվելու, զբոսնելու, ակտիվ միջոցառումներ կազմակերպելու վայրեր, կունենան համապատասխան կահավորանք՝ այգեպուրակային կահույք, փոքր ճարտարապետական ձևեր և սարքավորումներ (այդ թվում ինտերնետ, հեռախոսների և համակարգիչների լիցքավորման կետեր):

Նախագծվող տարածքի տարբեր հատվածներում նախատեսվել է 4-5 այգեպուրակային գոտի, բոլորը ճեմուղուն հարող հատվածներում: Չբոսայգիները և պուրակները կստեղծվեն հատուկ ընտրված ծառերի և թփերի համադրությամբ, որոնք բնորոշ են Սևանի այս տարածշրջանի կլիմայական գոտուն:

14.3 Ջերմոց-ձմեռային այգի

Չբոսայգու դիմաց, ճեմուղուն կից, լողափնյա հատվածում առաջարկվում է կառուցել 2827 մ² մակերեսով ջերմոց-ձմեռային այգի: Հաշվի առնելով Սևանի քամոտ և հաճախ ցուրտ եղանակը՝ ջերմոցը թույլ կտա ստեղծել այլ (օրինակ արևադարձայի) բուսատեսակների հավաքածու, որը գրավիչ վայր կդառնա տարվա բոլոր եղանակներին:

Ձմեռային այգում կարելի է տեղավորել նաև սրճարան, գրադարան, ցուցասրահ:

14.4 Ծովափնյա տեսարանի (լանդշաֆտ) պահպանման գոտի

Սևանա լիճ

Նախատեսվում է 2 լանդշաֆտային պահպանման



Նկար 22.

գոտի: Կառուցապատումից ազատ է թողնվել այն հատվածը, որից՝ Մ-4 ճանապարհով անցնելիս բացվում է լճի համայնապատկերը: Այս գոտում կստեղծվի լանդշաֆտային պարկ, որի բարեկարգումը կիրականացվի բնական տարրերով՝ հարթեցված քարերով, դեղաբույսերով բարելավված ծածկույթով և ծաղիկներով պատված կղզյակներով:

Այս գոտում կարող է իր տեղը գտնել նաև գուլֆի դաշտը, որի շնորհիվ տարածքը ավելի ակտիվ կօգտագործվի, կբարելավվի հողային ծածկույթը, միաժամանակ կպահպանվի լճի բաց համայնապատկերը: Գուլֆի ակումբի մեկ հարկանի շենքը կարող է տեղադրվել հարևանությամբ նախատեսված սպորտի գոտում:

Ավտոճանապարհի և ճեմուղու միջև ընկած հատվածում կլինեն սպորտային բաց հարթակներ և լողավազաններ, մանկական խաղահրապարակներ:

Երկու օրինակ համաշխարհային փորձից

Նկար 23.



14.5 Ավտոկայանատեղեր.

Նախատեսվում է 6 ավտոկայանատեղի՝ 117-300 տեղերով: Հանրային ավտոկայանատեղերը նախատեսվել են հավասարապես բաշխված, հանրային լողափերի, կառուցապատվող գոտիների և հիմնական ճանապարհներին մոտ: Կայանատեղերի մի մասը նախատեսվում է շվաքարաններով կամ ծածկերով, որոնց վրա կտեղադրվեն արևային մարտկոցներ: Արևային միջին կայանների արտադրած էներգիան կօգտագործվի տարածքի արտաքին լուսավորության համար: Մասնավոր կայանատեղեր կլինեն նաև յուրաքանչյուր գոտում՝ կառուցվող օբյեկտների ստորգետնյա կամ մուտքային հատվածներում, ընդունված նախագծային լուծումներին համապատասխան:

14.6 Նավամատույցներ

Նախատեսվել է չորս նավամատույց.

- առաջինը՝ ճեմուղու սկզբնական հատվածում,
- երկրորդը՝ Լճաշեն-Սևան հատվածի միջնամասում,
- երրորդը՝ ջրի բարձրացման հետևանքով առաջացող կղզյակի մոտ,
- չորրորդը՝ թերակղզում:

Ժամանակակից նավամատույցների կառուցումը կիսթանի նավագնացությունը Սևանա լճում, կստեղծի ջրային տրանսպորտի և զբոսաշրջային նոր երթուղիների շահագործման հնարավորություն:



Նկար 24.

14.7 Լողափեր



Նկար 25.

Լողափերը (1-6 գոտի) նախատեսվել են այն հատվածներում, որտեղ լճի ջրի հատակի թեքությունը մեղմ է և հնարավոր է ապահովել նորմատիվային պահանջները: Լողափերի ծածկույթը նախատեսվում է բարելավել, փոխարինելով հողի շերտը ավազով և գլաքարով:

Լողափերի ընտրությունը պայմանավորված է ջրատարածության (ակվատորիա) բնույթով և չափերով: Լողափերը հարմարեցված կլինեն լողի, արևային լողանքների, հանգստի տարբեր ձևերի համար:

Լողափի տարածքում կնախատեսվեն երեք ենթագոտի.

- լողափ՝ ջրի եզրագծից 25մ և ավել լայնությամբ տարածք, հարմարեցված և կահավորված արևային լոգանքների ընդունման համար: Այստեղ կտեղադրվեն արևապաշտպան տենտեր, հովանոցներ, սոլյարիումներ, օդահարթակ-ատերարիումներ, ջրային ատրակցիոններ:

- Ակտիվ հանգստի շերտ (15-40մ), որը կկազմակերպվի լողափի գոտու սահմաններում, անմիջապես շարունակելով բուն լողափի հատվածը: Այստեղ կլինեն խաղա-սպորտային հրապարակներ, հանդերձարաններ:

- Բուժերային գոտի՝ պասիվ հանգստի համար կանաչ ստվերոտ հատված, որտեղ կլինեն հանգստի հարթակներ, զբոսուղիներ, բացօթյա տաղավարներ, ինչպես նաև՝ ցնցուղարաններ, զուգարաններ, դրամարկղային տաղավարներ, գույքի վարձույթի կետեր, բուժկետ, փրկարարական կայան, աղբարկղեր, մանրածախ առևտրի կետեր և մանկական հատվածներ՝ խաղահրապարակներ, մանկական լողավազաններ, ատրակցիոններ:



Նկար 26.

14.8 Մանկական խաղահրապարակներ, սպորտային գոտիներ



Նկար 27.

Սպորտային գոտին նախատեսվել է լանդշաֆտի պահպանման գոտու եզրին:

Սպորտի գործառույթներ կլինեն նաև հանգստի և ժամանցի գոտում, լանդշաֆտի պահպանման գոտում և զբոսայգիներում: Մանկական խաղահրապարակներ կարող են կազմակերպվել զբոսայգիներում և լողափնյա լայնացող հատվածներում:

14.9 Զրթեջային գոտիներ

Զրթեջային կառուցապատման գոտիները (1-9) նախատեսվել են 1-2 հարկանի՝ 400-600մ² մակերես ունեցող հողամասերի վրա: Գոտիների ներսում կնախագծվեն միակողմանի շարժման ճանապարհներ, որոնք կապահովեն մեքենաների մոտեցումը:

14.9.1 Հյուրանոցային, պանսիոնատային գոտիներ

Հյուրանոցային, պանսիոնատային գոտիները (1-16) կառուցապատվելու են առավելագույնը 4, 7 և 12 հարկանի հյուրանոցներով, պանսիոնատներով, հանգստի տներով: Նախատեսվում է.

- 4 հարկանի գոտիներում՝ ճեմուղուն զուգահեռ տարված կառուցապատման գծից 6.6 մ խորությամբ՝ 1 հարկանի, հաջորդ 6.6մ լայնությամբ գոտին՝ 2 հարկանի, մնացածը՝ 4 հարկանի,
- 7 հարկանի գոտում՝ կարմիր գծից 6.6 մ խորությամբ գոտին՝ 5 հարկ, շարունակությունը՝ 7 հարկ,
- 12 հարկանի հյուրանոցի տեղադիրքը թույլ է տալիս այն կառուցապատել առանց նշված սահմանափակումների:

Մեկ-երկու հարկանի գոտիների շնորհիվ ստեղծվում են ծածկված (երկու նեղ և ճակատահայաց կողմից բաց)՝ անցուղիներ (галерея), և առաջին և երկրորդ հարկերի հարթություններում բաց տերրասներ և պատշգամբներ:



Նկար 28.

14.9.2 Առևտրի և սպասարկման օբյեկտների գոտիներ

Առևտրի և սպասարկման օբյեկտների գոտիները(1-8) լինելու են 2 հարկանի Նախատեսվել են հիմնական ճանապարհներին մոտ և ծովափնյա ճեմուղու երկայնքով՝ ընմիջելով հյուրանոցային գոտիներով: Հիմնական ճանապարհներին մոտ գոտիները Նախատեսված են առևտրի կենտրոնների, մթերային և այլ ապրանքների շուկաների, ավտոտեխսպասարկման օբյեկտների, սրճարանների և սննդի կազմակերպման այլ օբյեկտների համար:

Ճեմուղուն մոտ գոտիները՝ ռեստորանների, սրճարանների, փոքր խանութների, հուշանվերների, վարձույթի կետերի և այլ նմանատիպ օբյեկտների համար:

14.9.3 Ժամանցի բազմաֆունկցիոնալ գոտիներ

Հանգստի և ժամանցի գոտիները Նախատեսվել են, որպես ճեմելու և զբոսանքի Նպատակակետ՝ Նախագծվող հատվածի կենտրոնական մասում, ստեղծելով ակտիվ գործառույթներով հագեցած գոտի (ջրաշխարհի, բաց և փակ լողավազաններ, կինոթատրոն, ցուցահանդեսային տարածքներ, խաղասենյակներ, ատրակցիոններ և այլն), որը երեք կողմից

լինելու է խիտ կառուցապատված, իսկ դեպի լիճ նայող հատվածը շարունակվելու է մեծ զբոսայգով:

Սահմանվել են նախագծվող տարածքի կառուցապատման հիմնական չափորոշիչները (մակերես, հարկայնություն, կառուցապատման տոկոս և այլն): Նախատեսվող կառուցապատման(մեկ հողամասի անջրանցիկ հատվածի) և կանաչապատման (մեկ հողամասի կանաչապատման) տոկոսային հարաբերությունը.

- քոթեջային գոտու(1-9) համար կառուցապատումը ` 30%, կանաչապատումը` 70%,
- հյուրանոցային գոտու(1-16) կառուցապատումը` 50%, կանաչապատումը` 50%,
- առևտրի և սպասարկման օբյեկտների գոտու (1-8) կառուցապատումը` 70%, կանաչապատումը` 30%,
- Կարմիր խաչի հիվանդանոցի տարածքի (36618մ²) կառուցապատումը` 60%, կանաչապատումը` 40%,
- հանգստի և ժամանցի գոտու (1-3) կառուցապատումը` 60%, կանաչապատումը` 40%,
- սպորտային գոտու կառուցապատումը` 60%, կանաչապատումը` 40%,
- վրանային գոտու կառուցապատումը` 15%, կանաչապատումը` 85%,
- լանդշաֆտի պահպանման գոտու (1-2) կառուցապատումը` 2%, կանաչապատումը` 98 %,
- զբոսայգիների (1-6) կառուցապատումը` 20%, կանաչապատումը` 80%,
- կանաչ գոտու (1-5) կանաչապատումը` 100%:

Ցնցուղարաններ, հանդերձարաններ, սանհանգույցներ, ջրային տրանսպորտի պահպանման ծածկերը, արագ սննդի և վարձույթի կետերը պետք է լինեն 1 հարկանի ժամանակավոր շինություններ` կազմված թեթև կոնստրուկցիաներից և տեղադրված լինեն հատուկ նախատեսված հարթակներում:

15. ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂՁՈՒ ԶԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի վերակառուցման Էսքիզային առաջարկություն:

«Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի շենքը տեղադրված է Սևանավանք տանող աստիճանների սկզբնամասում: Շենքն իր չափերով, գույնով, արտաքին տեսքով կառուցվել է որպես դոմինանտ և իշխում է բոլոր համայնապատկերներում, լինի դա Սևանավանքը, թե շրջակա կառուցապատումը: Ակնհայտ է, որ շենքը կառուցելիս նպատակ է դրվել զբոսաշրջիկների և այցելուների ամբողջ ուշադրությունը գրավել այս օբյեկտով: Սակայն խնդիրն այն է, որ նշվածն իրականացվել է նաև Սևանավանքի հաշվին: Ռեստորանային այս շենքը իր տեղի և միջավայրի համար այնքան մեծ է, որ հրապարակից

Նայելիս գրեթե բոլոր կետերից փակում է Սևանավանքի պատկերները: Նման հարևանությամբ Սևանավանքի եկեղեցիները դիտվում են անմասշտաբ փոքր և մղվում են երկրորդական պլան:

Թերակղզու ստորոտում «Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի շենքից բացի կան բազմաթիվ հիմնական և ոչ հիմնական շինություններ, որոնք խաթարում են Սևանավանքի համայնապատկերը, փակում են լճի տեսարանները, մեկը մյուսի հետ դիտնանսի մեջ են: Այս շինությունների մեծ մասը հավանաբար կառուցվել է ինքնակամ եղանակով (և շինարարությունը շարունակվում է), խնդրահարույց դարձնելով այս հատվածի քաղաքաշինական իրավիճակի կարգավորումը:

Վերջին տարվա ընթացքում հրապարակի պարագծով տեղադրվել են փայտե տաղավարների շարքեր հուշանվերների վաճառքը կանոնակարգելու նպատակով, սակայն քաղաքաշինական իրավիճակը շտկելու համար դեռևս անհրաժեշտ է իրականացնել մի շարք լուրջ բարելավումներ:

Առաջարկվում է.

- կասեցնել բոլոր ինքնակամ իրականացվող շինարարական աշխատանքները և պարտադրել կառուցապատողներին վերադարձնել հողամասերն իրենց նախնական վիճակին:

- Ընդունելի համարելով հրապարակի պարագծով հուշանվերների տաղավարների տեղադրման սկզբունքը, առայժմ պահպանել դրանք (հետագայում դրանց արտաքին տեսքը բարելավելու ակնկալիքով) և բարեկարգել հրապարակը: Հրապարակի կենտրոնական մասում ստեղծել կանաչ պուրակ, և տաղավարների երկայնքով տնկել ծառեր (օրինակ՝ յուրաքանչյուր երրորդ տաղավարի դիմաց):

- Հնարավորինս բացել դեպի լիճ նայող տեսարանը, ազատելով այդ հատվածը շինություններից (հատկապես, եթե պարզվի, որ դրանք ինքնակամ են) :

- Հրապարակն ազատել մեքենաներից, փակելով վերջիններիս մուտքը դեպի հրապարակ, ստեղծել ավտոկայանատեղ ավտոմեքենաների և տուրիստական ավտոբուսների համար, թերակղզի տանող ճանապարհին հարող հատվածում՝ ԱԻՆ – ի շենքի մոտ:

- Վերակառուցել «Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի շենքը, դարձնելով այն միջավայրին համահունչ, ներդաշնակեցնել այն թերակղզու լեռնային ֆոնին և ճարտարապետական միջոցներով վերադարձնել դոմինանտ դերը Սևանավանքին:

- Պահպանել (անհրաժեշտության դեպքում նորոգել) դեպի Սևանավանք տանող աստիճանները, քանի որ դրանց հաղթահարումն այցելուների համար լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում, միաժամանակ բարեկարգել ավտոճանապարհը, սահմանափակելով վերջինիս օգտագործումը՝ հաշմանդամներին և մեծահասակներին էլեկտրական տրանսպորտով վերև բարձրացնելու համար:

- Հրապարակից դեպի թերակղզու ծայրը տանող ճանապարհի մոտ, այն հատվածում, որտեղ Սևանավանքի ժայռը համարյա ուղղահայաց իջնում է մինչև

ճանապարհը կառուցել վերելակ, ընտրելով կյուբերի այնպիսի համադրություն, որ մնալով ժամանակակից կառույց, այն ներդաշնակորեն ընգծվի ժայռի և Սևանավանքի համայնապատկերը:

Դեպի Սևանավանք տանող աստիճաններ (փաստացի վիճակ) վերևի շարքը



Քատակազիծ 2.



Նկար 29.



Նկար 30.

Աստիճանների սկզբնամասի վերակառուցման առաջարկություն.

Այժմ աստիճանի 1-ից մինչև 43-րդ քայլը անընդմեջ բարձրանում են՝ առանց հարթակի: Առաջարկվում է վերակառուցել այս հատվածը, աստիճանի քայլերը բաշխելով հավասարաչափ և ընդմիջելով երկու հարթակով:



Հատակագիծ 3.

Սևանավանք տանող աստիճանների մուտքի հարակից տարածքի կառուցապատման, բարեկարգման, վերակառուցման առաջարկություն

Տաղավարների տարածքը ազատել է մեքենաներից և կանաչապատել: «Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի վերակառուցման այս տարբերակով (տարբերակ N3)




Նկար 31.



Նկար 32.

առաջարկվում է ապամոնտաժել 3-րդ հարկը, շենքը ծածկել հարթ տանիքով, տանիքը կանաչապատել (ծառերով), կանաչ շերտով անջատելով շենքը ժայռից և Սևանավանքից:



Հատակագիծ 4.

16. Օգտագործվող բնառեսուրսներ և կյուլթեր

Նախատեսվող տարածքի կառուցապատման ժամանակ օգտագործվելու են թույլատրված շինարարական կյուլթեր և գույներ, բացառելով 24 հունվարի 2002 թ. «Սեվանա լճի Էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող կյուլթերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների եվ այլ կյուլթերի ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարություն N57 որոշմամբ հաստատված կյուլթերի օգտագործումը:

Օգտագործվելու են բնական քարեր՝ բազալտ, գրանիտ, տուֆ, բնական փայտ, ավազ, գլաքար՝ լողափերի ծածկույթի համար: Ճանապարհների ասֆալտապատումը կատարվելու է ավանդական եղանակով:

Տարածքի գունային գամման լինելու է համահունչ շրջակա միջավայրին՝ հիմնականում օգտագործվելու են սպիտակ, օխրայի բուրդ երանգները, տերակոտա, բաց մոխրագույնի երանգները:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՏԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

| Շինանյութ | | Արթիկի տուֆ | Անիի տուֆ | Երևանի, Գյումրիի տուֆ | Գեղաքարի տուֆ | Մեծավանի տուֆ | Ձորագետի տուֆ |
|--------------------|----|-------------|-------------|-----------------------|-----------------------------|---|--------------------------|
| Գունային ներկապնակ | | վարդագույն | դեղին | սև, կարմիր | բաց վարդագույն, մարմնագույն | մուգ վարդագույն, կարմրավուն, մարմնագույն, դեղնավուն | աղյուսագույն, կարմրավուն |
| | GB | 229-184-183 | 244-176-131 | 74-68-42 | 242-219-218 | 221-131-131 | 241-153-93 |
| | GB | 217-149-148 | 239-151-91 | 64-58-62 | 237-205-203 | 208-84-84 | 186-73-28 |
| | GB | | 200-148-0 | 196-89-17 | 251-228-213 | 247-202-172 | 163-64-25 |
| | | | | 182-66-2 | | 238-176-0 | |
| | | Բազալտ | Ֆելզիտ | Տրավերտին | Մարմար | Գրանիտ | Բետոն |
| | GB | 191-191-191 | 225-251-247 | 255-246-225 | 235-245-255 | 213-220-228 | 201-201-201 |
| | GB | 174-170-170 | 255-242-204 | 202-140-16 | 245-255-235 | 172-185-202 | 123-123-123 |
| | GB | 118-113-113 | | | | 50-62-79 | 82-82-82 |
| | | | | | | 173-61-80 | |
| | | | | | | 53-97-95 | |

ՏԱՆԻՔՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԳՈՒՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՊՆԱԿ

| Շինանյութ | | Բնական և արհեստական կղմինդր, մետաղե թիթեղ, մետաղե կղմինդր, պրոֆիլ, պրոֆնաստիլ, այլ | | | | | |
|--------------------|----|--|------------|------------|--|-------------|---------------|
| Գունային ներկապնակ | GB | 237-125-49 | 159-51-33 | 194-62-40 | | 120-136-125 | 54-76-80-7011 |
| | AL | 2011 | 3016-49/31 | 2002-49/24 | | 7003 | |
| | | | 980 | 550 | | | |

Նախատեսվող տարածքի համար նախատեսվելու են ենթակառուցվածքների՝ ջրամատակարարման և կոյուղու, էլեկտրամատակարարման, գազամատակարարման,

արտաքին լուսավորության համակարգեր՝ ըստ նախօրոք համաձայնեցված նախագծերի, ներառելով արևային լույսը կայանների տեղադրման լուծումները:

17. Հիմնադրության փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Հիմնադրության փաստաթղթով նախատեսված «Սևան» ազգային պարկի Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտևորման աշխատանքները հիմնականում ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների, ենթակառուցվածքների քանդման, վերականգնման, վերակառուցման աշխատանքները: Հետևաբար անմիջական ազդեցությունը բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, բուսական ու կենդանական տեսակների, բնության հուշարձանների, պատմամշակութային արժեքների վրա էական բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, գոյություն ունեցող կանաչ տարածքներում աշխատանքներ չեն նախատեսվում: Հիմնադրության փաստաթղթով նախատեսվում է վերջինիս դրույթների իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցություններին ուղղված բնապահպանական միջոցառումների իրականացում: Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք է հադիսացել նաև 2019թ. սեպտեմբերի 30-ի՝ ՀՀ կառավարության 1293-Լ որոշմամբ սահմանված «Սևանա լճի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման» 2020թ. միջոցառումների ցանկը: Հիմնադրության փաստաթղթով նախատեսվում է պրոմենադի կառուցում, որտեղ դեպի լիճ լինելու են լողափեր և որոշ հատվածներում՝ խաղահրապարակներ: Եթե պրոմենադը կառուցելիս լինեն խանգարող կառույցներ, ինքնակամ շինություններ կամ ենթակառուցվածքներ, դրանք կհանվեն կամ կապամոնտաժվեն հիմնադրույթով նախատեսվող գործունեությունների շրջանականերում, առաջնորդվելով վերը նշված կառավարության որոշման միջոցառումներից (ջրածածկման տարածքներ):

Հիմնադրության փաստաթղթում նախատեսվող միջոցառումները կկիրառվեն, ելնելով տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների շրջանակից: Ծրագրի շրջանակներում նախատեսվող գործունեությունների համապատասխան փաստաթղթերում կկիրառվեն և կպահպանվեն հիմնադրության փաստաթղթով սահմանված միջոցառումները՝ տեղայնացնելով, ճշգրտելով և համապատասխանեցնելով գործունեության տեսակին, տարվա հստակ քանակական և որակական գնահատումներ: Գործունեությունների իրականացման փուլում կիրականացվի հիմնադրության փաստաթղթով ամրագրված միջոցառումների պարտադիր կատարման մոնիթորինգ՝ «Սևան» ԱՊ-ի և համապատասխան գերատեսչությունների կողմից:

17.1 Օդային ավազան.

Օդային ավազան փոշու և այլ նյութերի արտանետումները մեղմացնելու համար նախատեսվում է.

- բացահայտել աղտոտման հիմնական աղբյուրները,
- ստեղծել հուսալի մոնիթորինգային համակարգ՝ կենսածին տարրերի հաշվեկշռի գնահատման նպատակով,
- ՀՀ կառավարություն 2002թ. հունվարի 24-ի «Սեվանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ հաստատված նյութերի օգտագործման բացառումը:

17.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.

- քանդվելու են բոլոր ինքնակամ շինությունները,
- փակել անմիջական ազդեցության գոտում գործող կոյուղահորերը (սեպտիկ հորերը): Վերանայել վերջիններիս վերակառուցման հնարավորությունները՝ պրոմենադից ջուրն ընկած հատվածներում,
- բացառել բետոնապատ հիմքերի, ավտոկայանատեղերի, հիմնական կառույցների ստեղծումը, առաջին ենթագոտում՝ Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման և ողողման ենթակա տարածքները, որը ներառում է «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը (ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008թ. N 1563-N որոշում),
- հողամասերի սահմանազատումն իրականացնել կանաչապատման տեսքով՝ մշտադալար խնամված թփերով:

17.3 Ջրային ռեսուրսներ.

Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է.

- լճի անմիջապես ափամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում,

- ապահովել մաքրման կայանների գործունեության արդյունավետությունը, իրականացնելով մեխանիկական, քիմիական և կենսաբանական մաքրում՝ Սևանա լիճը հետագա աղտոտումից պահպանելու նպատակով,
- կանոնավոր հսկողություն սահմանել սննդի օբյեկտների և հանգստյան տների մաքրման կայանների նկատմամբ, հետևել դրանց աշխատանքին,
- շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել մակերևութային և տեղումներից առաջացող հոսքաջրերի կազմակերպված հեռացում համապատասխան մաքրումից հետո,
- Սևանա լճի ջրի բարձրացման առավելագույն հնարավոր նիշը ընդունել 1903.5մ բացարձակ նիշը, 1.5մ ալիքի երկարությամբ,
- Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում 1905մ-ի ներքև բացարձակ նիշից ներքև գտնվող ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների մաքրում,
- 1903.5-1905մ նիշը (1.5մ ալիքի ազդեցության գոտին) ծառատեսակների պահպանում,
- Սևանա լճի բաց լանդշաֆտային տեսարանի ապահովում՝ ազատելով լիճը խանգարող շինություններից,
- ծրագրի իրականացումը կբացառի լճի ափերին (Լճաշենի հատված) մասայական բնույթ է կրող անասունների արածեցումն, ինչպես նաև եղեգներից ճահճացած հատվածների մաքրում, ինչը կնպաստի ջրի մաքրմանը,
- ջրի մակարդակը բարձրանալու դեպքում կապահովվի լճի խորքային սառը շերտը, որն անհրաժեշտ է ջրում ջրիմուռների և այլ բուսականության բազմացման և ճահճացման երևույթների կանխման նպատակով:

17.4 Բուսական և կենդանական աշխարհ.

Կենսաբազմազանությունը պահպանելու նպատակով նախատեսվում է.

- տարածքի Էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության պահպանում,
- լճերում սննդային տարրերի, հատկապես ֆոսֆորի նվազեցման ռազմավարության մշակում,
- կենսածին տարրերի սահմանափակում, որի արդյունքում կդադարեն լճի ծաղկման գործընթացներն, ինչը չի խանգարի լճի պաշտպանական գոտու՝ մակրոֆիտների և Էնդեմիկ ձկնատեսակների կերային բազայի՝ հատակային ֆաունայի, զարգացմանը,
- ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների բուսածածկի մաքրում,
- ստեղծվող զբոսայգիներում և պուրակներում, ինչպես նաև անտառաշերտի հիմնման նպատակով ծառերի և թփերի ընտրությունը կատարվելու է տարածաշրջանին բնորոշ բուսատեսակների համադրությամբ՝ թխկի, գիհի, եղևնի, սոճի և այլն,

- բացառվելու են նախատեսվող կանաչ գոտում կառուցապատման աշխատանքները,
- ապահովվելու են ռեկրեացիոն գոտու ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումը և հասանելիությունը:

17.5 Թափոններ.

Թափոնների կառավարման նպատակով նախատեսվում է.

- համաձայն ՀՀ կառավարության 1293-Լ որոշման (2020թ.հավելված 2.5 կետ) պահանջների՝ 1901.5մ բացարձակ նիշից բարձր ջրածածկման ենթակա տարածքներում շինությունների և ենթակառուցվածքների ապամոնտաժում և տարածքներից թափոնների հեռացում,
- իրականացվելու են կոշտ կենցաղային թափոնների արդյունավետ կառավարում,
- ռեկրեացիոն գոտում կազմակերպվելու է տարանջատված աղբահավաքում և կանոնավոր աղբահանություն, տեղադրելով տարբեր կոնտեյներներ՝ մթերքի մնացորդների, պլաստիկ և ապակե տարաների համար:

17. 6 Բարեկարգում, լանդշաֆտի վերականգնում.

Լանդշաֆտի պահպանման նպատակով նախատեսվում է.

- պահպանվելու են բնական լանդշաֆտները, լճի տեսարանները, բացառելով լանդշաֆտային գոտում մեծ ծառերի տնկումը,
- պահպանվելու է ջրային ավազանի ափի 10մ անօտարելի շերտը, առանձին դեպքում, երբ Սևանի լողափի շերտը կարող է նեղ լինել, սահմանվելու է 3-5 մ կախված ռելիեֆի առանձնահատկություններից,
- սահմանվելու են զբոսայգիների կամ ժամանցային գոտիների հատվածներին կից լողափերի հանրային լողափի կարգավիճակը,
- լողափի տարածքում անբարենպաստ գրունտների դեպքում (տորֆ, տիղմ, բնահող) ստեղծվելու են արհեստական ծածկույթ՝ օգտագործելով բերովի ավազ կամ գլալաքար,
- մեկ գոտու սահմաններում, անկախ լոտերից՝ կանաչապատումն իրականացվելու է միասնական լուծումներով, կիրառելով նույնանման բույսեր, թփեր, ծաղիկներ,
- լողափի և լողափի բուժերային գոտիների կահավորման ու սարքավորումներով ապահովման տարրերը պետք է համապատասխանեն 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563 որոշմամբ սահմանված Տեխնիկական բնութագրերին (N2 Հավելված),
- բացառվելու են օբյեկտների պարսպապատումները՝ բետոնապատ կամ քարե պարիսպներով,
- շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելման նպատակով՝ մոնիթորինգի իրականացում:

17.7 Սոցիալական.

Ծրագրի իրականացումը նկատելի դրական ազդեցություն կունենա մարզի, ինչպես նաև հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար: Այն խթան կհանդիսանա.

- տեղի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների, բնակիչների կենսամակարդակի բարելավման համար,
- հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների ամբողջովին իրականացնելու դեպքում կստեղծվեն նոր աշխատատեղեր (մշտական՝ 3000-4200 և շինարարության փուլ),
- Սևանա լճի ջրի էկոհամակարգի դրական փոփոխությունը կնպաստի բնակչության առողջական և հանգստի պայմանների բարելավմանը:

Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման բնապահպանական կառավարման պլան

| <p>Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները</p> | <p>Մեղմող միջոցառման անվանումը</p> | <p>Միջոցառման իրականացման պատասխանատու</p> | <p>Վերահսկող</p> |
|--|--|--|---|
| <p>Օդային ավազան</p> | <p>Փոշու և այլ նյութերի արտանետումները կանխարգելու նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> - բացահայտել աղտոտման հիմնական աղբյուրները, - ստեղծել հոլսալի մոնիթորինգային համակարգ՝ կենսածին տարրերի հաշվկշռի գնահատման նպատակով, - ՀՀ կառավարություն 2002թ. հունվարի 24-ի «Սեվանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների եվ այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N57 որոշմամբ հաստատված նյութերի օգտագործման բացառումը: | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՏԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |

| | | | | |
|--|----------------------------------|---|-------------------------|---|
| | <p>Հողային ռեսուրսներ</p> | <p>Հողային ռեսուրսների աղտոտումից պահպանելու նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> - փակել անմիջական ազդեցության գոտում գործող կոյուղահորերը (սեպտիկ հորերը): Վերանայել վերջիններիս վերակառուցման հնարավորությունները՝ պրոմենադից ջուրն ընկած հատվածներում, - բացառել բետոնապատ հիմքերի, ավտոկայանատեղերի, հիմնական կառույցների ստեղծումը, առաջին ենթագոտում Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ջրածածկման և ողողման ենթակա տարածքները, որը ներառում է «Սևան» ազգային պարկի լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը (ՀՀ կառավարության 18 դեկտեմբերի 2008թ. N 1563-N որոշում), - հողամասերի սահմանազատումն իրականացնել կանաչապատման տեսքով՝ մշտադալար խնամված թփերով: | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՏԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |
|--|----------------------------------|---|-------------------------|---|

| | | | |
|---------------------------------|---|-------------------------|--|
| <p>Ջրային ռեսուրսներ</p> | <p>Ջրային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - լճի անմիջապես ավիամերձ տարածքում գործող հանգստի և սպասարկման օբյեկտներում կոմունալ-կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրում, - ապահովել մաքրման կայանների գործունեության արդյունավետությունը, իրականացնելով մեխանիկական, քիմիական և կենսաբանական մաքրում՝ Սևանա լիճը հետագա աղտոտումից պահպանելու նպատակով, - կանոնավոր հսկողություն սահմանել սևնդի օբյեկտների և հանգստյան տների մաքրման կայանների նկատմամբ, հետևել դրանց աշխատանքին, - շինարարական աշխատանքների ընթացքում իրականացնել մակերևութային և տեղումներից առաջացող հոսքաջրերի կազմակերպված հեռացում՝ համապատասխան մաքրումից հետո, - Սևանա լճի ջրի բարձրացման առավելագույն հնարավոր նիշը ընդունել 1903.5մ բացարձակ նիշը, 1.5մ ավիքի երկարությամբ, - Սևանա լճի շրջակայքում ջրածածկման ենթակա տարածքներում 1905մ-ի ներքև բացարձակ նիշից ներքև գտնվող ջրի տակ մնացած շինությունների ու ենթակառուցվածքների ապամոնտաժում և թափոնների մաքրում, | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՒՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |
|---------------------------------|---|-------------------------|--|

| | | | | |
|--|--|--|-------------------------|---|
| | | <p>-1903.5-1905մ նիշը (1.5մ ալիքի ազդեցության գոտին) ծառատեսակների պահպանում,</p> <p>- ծրագրի իրականացումը կբացառի լճի ափերին (Լճաշենի հատված) մասայական բնույթ կրող անասունների արածեցումն, ինչպես նաև ճահճացած հատվածները եղեգներից մաքրում, ինչը կնպաստի ջրի մաքրմանը,</p> <p>- ջրի մակարդակը բարձրանալու դեպքում կապահովվի լճի խորքային սառը շերտը, որն անհրաժեշտ է ջրում ջրիմուռների և այլ բուսականության բազմացման և ճահճացման երևույթների կանխման նպատակով:</p> | | |
| | <p>Բուսական և կենդանական աշխարհ</p> | <p>Կենսաբազմազանությունը պահպանելու նպատակով.</p> <p>- -տարածքի Էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության պահպանում,</p> <p>- - լճերում սննդային տարրերի, հատկապես ֆոսֆորի նվազեցման ռազմավարության մշակում,</p> <p>- - կենսածին տարրերի սահմանափակում, որի արդյունքում կդադարեն լճի ծաղկման գործընթացներն, ինչը չի խանգարի լճի պաշտպանական գոտու՝ մակրոֆիտների և Էնդեմիկ ձկնատեսակների կերային բազայի՝ հատակային ֆաունայի, զարգացմանը,</p> <p>- - ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքների բուսածածկի մաքրում,</p> | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՏԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |

| | | | | |
|--|------------------------|---|-------------------------|---|
| | | <ul style="list-style-type: none"> - - ստեղծվող զբոսայգիներում և պուրակներում ինչպես նաև անտառաշերտի հիմնման նպատակով ծառերի և թփերի ընտրությունը կատարվելու է տարածաշրջանին բնորոշ բուսատեսակների համադրությամբ՝ թխկի, գիհի, եղևնի, սոճի և այլն, - բացառվելու են նախատեսվող կանաչ գոտում կառուցապատման աշխատաքները, - - ապահովվելու են ռեկրեացիոն գոտու ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխումը և հասանելիությունը: | | |
| | <p>Թափոններ</p> | <ul style="list-style-type: none"> - Թափոնների կառավարման նպատակով . - - համաձայն ՀՀ կառավարության 1293-Լ որոշման (2020թ.հավելված 2.5 կետ) պահանջների համապատասխան 1901.5մ բացարձակ նիշից բարձր ջրածածկման ենթակա տարածքներում շինությունների և ենթակառուցվածքների ապամոնտաժում և տարածքներից թափոնների հեռացում, - -իրականացվելու են կոշտ կենցաղային թափոնների արդյունավետ կառավարում, - -ռեկրեացիոն գոտում կազմակերպվելու է տարանջատված աղբահավաքում և կանոնավոր աղբահանություն, տեղադրելով տարբեր կոնտեյներներ՝ մթերքի մնացորդների, պլաստիկի և ապակե տարաների համար: | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՏԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |

| | | | |
|---|--|-------------------------|--|
| <p>Բարեկարգում, լանդշաֆտի վերականգնում</p> | <ul style="list-style-type: none"> - Լանդշաֆտը պահպանելու նպատակով . - պահպանվելու են բնական լանդշաֆտները, լճի տեսարանները, բացառելով լանդշաֆտային գոտում մեծ ծառերի տնկումը, - պահպանվելու է ջրային ավազանի ափի 10մ անօտարելի շերտը, առանձին դեպքում, երբ Սևանի լողափի շերտը կարող է նեղ լինել, սահմանվելու է 3-5 մ կախված ռելիեֆի առանձնահատկություններից, - կսահմանվեն զբոսայգիների կամ ժամանցային գոտիների հատվածներին կից լողափերի հանրային լողափի կարգավիճակը, - լողափի տարածքում անբարենպաստ գրունտների դեպքում (տորֆ, տիղմ, բնահող) ստեղծվելու են արհեստական ծածկույթ՝ օգտագործելով բերովի ավազ կամ գլալաքար, - մեկ գոտու սահմաններում, անկախ լոտերից՝ կանաչապատումն իրականացվելու է միասնական լուծումներով, կիրառելով նույնանման բույսեր, թփեր, ծաղիկներ, - լողափի և լողափի բուժերային գոտիների կահավորման ու սարքավորումներով ապահովման տարրերը պետք է համապատասխանեն 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1563 որոշմամբ սահմանված Տեխնիկական բնութագրերին (N2 Հավելված), - բացառվելու են օբյեկտների պարսպապատումները: | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԽԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |
|---|--|-------------------------|--|

| | | | | |
|--|---------------------------|---|-------------------------|---|
| | <p>Սոցիալական.</p> | <p>Ծրագրի իրականացումը նկատելի դրական ազդեցություն կունենա մարզի, ինչպես նաև հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար: Այն խթան կհանդիսանա.</p> <ul style="list-style-type: none"> - տեղի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների, բնակիչների կենսամակարդակի բարելավման համար, - կատեղծվեն նոր աշխատատեղեր, - Սևանա լճի ջրի էկոհամակարգի դրական փոփոխությունը կնպաստի բնակչության առողջական և հանգստի պայմանների բարելավմանը: | <p>Կապալառու</p> | <p>«ԱՐԻՏԻՏՈՆ» ՍՊԸ</p> <p>«Սևան»ԱՊ</p> |
|--|---------------------------|---|-------------------------|---|

Գրականություն

1. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 1-ի N 308 - Ն որոշման՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՄՆԻ ԵՒ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՄՆԻ ԵՒ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ Ռ Ա Չ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն:

3. Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հաշվետվություն:

4. ՀՀ կառավարություն 24 հունվարի 2002 թ. <<Սեվանա լճի Էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների եվ այլ նյութերի ցանկը հաստատելու մասին>> N57 որոշում:

5. ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր:

6. 2019թ. հուլիսի 25-ի՝ ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 30-ի N 927 և 2007թ. հունվարի 18 N 205 որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N947 ՀՀ կառավարության որոշումը:


7. 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:

8. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը՝ 2019 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՀ վիճակագրական կոմիտե

Հավելված 1.


Տարածքի իրադրային սխեմաները

Հավելված 1.1



«ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՄԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՉԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ


ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ
Մ 1:10000




0 50 m 100 m 200 m 300 m 400 m 500 m

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ
ԸՍՏ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ
Մ 1:10000









Սևան քաղաքի գլխավոր հատակագիծը

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ԲԵՎԱՆ ԲԵՐԱԲԵՆՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱԿԱՅԻՐ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ
 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ
 /ԲԻՍՆԱԿԱՆ ԳՃԱԳԻՐ/
 Մ 1:5000



Լճաշեն գյուղական համայնքի գլխավոր հատակագիծը

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻԻԻ ՍԱՐԻ ԼՏԱՇԵՆ ԳԵՂՈՒԿԱՆ ԳՍԱԽՅԵՐ ԴՄԱՐԵՑԿԱՑ ՂԵՆԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՉ



Տեխնիկական բնութագիր

| Տեխնիկական բնութագիր | |
|---|--|
| Նախագծման փուլերը | I – նախագծի ճարտարապետական մաս II – նախագծի ինժեներական մասեր, առաջնահերթ կառուցապատման հատվածի հանրային տարածքների աշխատանքային փաստաթղթեր III – համաձայնեցման գործընթաց |
| Իրավիճակի նկարագիրը | <ul style="list-style-type: none"> • Ներկայումս օգտագործվում է Սևանա լճի ռեկրեացիոն ռեսուրսների չկանոնադրված մասը, • Առկա է չկանոնակարգված կառուցապատում. • Գերակշռում են անշուք ոչ հիմնական շինությունները, լքված, չօգտագործվող կամ անավարտ կառույցները: Տարածքի մի մասը գտնվում է 1905.0 նիշից ցածր, որտեղ համաձայն ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշմամբ հաստատված դրույթների հիմնական շինությունների կառուցում չի թույլատրվում: • Շատ են ամայի տարածքները, բուսականությունը սակավ է կամ բացակայում է. • Չարգացած չէ ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքը. • Քիչ են ներդրումները հանգստի և զբոսաշրջության ոլորտներում, քանի որ 1905.0 նիշից ցածր տարածքներում հիմնական շինությունների կառուցումը չի թույլատրվում, իսկ դրանից բարձր՝ հողամասերը տրվում են վարձակալությամբ ընդամենը 25 տարի ժամկետով, ինչն իր հերթին զսպող հանգամանք է հիմնական շենքեր կառուցելու համար. • Համայնքների բնակչությունն ապրելով Սևանա լճի ափամերձ տարածքներում, ըստ էության գրկված է ջրին մոտ լինելու օգուտներից, համայնքները տնտեսապես թույլ են, աշխատանքային արտագաղթը բարձր: |
| Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը | <p>Նպատակը՝ Ներկայացնել «Սևան» ազգային պարկի կենտրոնական գոտում և ափամերձ տարածքում ներդրումային ծրագրերի իրականացման համար նպատակահարմար գոտիների առանձնացման, ինչպես նաև պարկի տարածքում կառուցապատման կանոնակարգման չափորոշիչների նախագիծ.</p> <p>1-ին փուլ</p> <p>«Սևան» ազգային պարկի կենտրոնական գոտում և ափամերձ տարածքում Սևանի թերակղզի հատվածում միանգամից գոտաբաժանում և ներդրումային ծրագրերի առաջադրման նպատակով մշակել նշված հատվածի գոտաբաժանման նախագիծը և քաղաքաշինական կանոնադրությունը:</p> <p>Մասնավորապես, նախատեսել՝</p> <ul style="list-style-type: none"> • Ծովափնյա ճեմուղի (promenade), <p>Սկիզբը՝ դեպի Մարտունի տանող ճանապարհի հետ հատման կետից մինչև Սևանի թերակղզի (Սևանավանքի մուտքը), հիմնականում 1905.0 մ նիշով:</p> <ul style="list-style-type: none"> • Հեծանվային ուղիներ • Ավտոմոբիլային ճանապարհների ցանց, ավտոկայանատեղեր, • Նավամատուցներ, լողափնյա տարածքներ • Լանդշաֆտի պահպանման գոտիներ, կանաչապատ տարածքներ, զբոսայգիներ • Տարբեր գործառնական նշանակությամբ կառուցապատման գոտիներ՝ ապահովելով հանգստի և զբոսաշրջության համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, ինչպես նաև նպաստելով հարևան համայնքների զարգացումը, նախատեսել հարմարավետ ֆունկցիոնալ կապեր մայրուղու և Սևան քաղաքի հետ: • Արտաքին լուսավորություն, ՏՏ ոլորտի ծառայությունների հասանելիություն, արևային էներգիայի աղբյուրների նախատեսում, <p>Մշակել՝</p> <ul style="list-style-type: none"> • գործառնական գոտիների կառուցապատման և ծավալատարածական չափորոշիչները, սահմանել թույլատրելի օգտագործման ձևերը, • ամբողջ տարածքի (Լճափն-Սևանի թերակղզի) քաղաքաշինական կանոնադրությունը և կառուցապատման կանոնները • Առանձին գոտիների կառուցապատման տարբերակներ (ըստ ընտրված հատվածների). <p>Թերակղզու հատվածում կառուցապատումը կանոնակարգելու նպատակով մշակել առաջարկություններ՝</p> <ol style="list-style-type: none"> 1) «Աշոտ Երկաթ» ռեստորանային համալիրի վերակառուցման էքզիզային նախագիծ, ներդաշնակեցնելով այն Սևանավանքի մասշտաբին և համայնապատկերին, 2) դեպի Սևանավանք տանող աստիճանների և ավտոմոբիլային ճանապարհի կանոնակարգման, հաշմանդամների և տարեցների համար մատչելիության, 3) դեպի Սևանավանք տանող մուտքի հարակից տարածքի կառուցապատման, բարեկարգման, վերակառուցման ուղղությամբ 4) նախատեսել ավտոկայանատեղիներ տուրիստական ավտոբուսների համար: <p>Առաջին փուլով պահանջվող փաստաթղթերի ներկայացման ժամկետ է սահմանվում համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30-րդ օրացուցային օրը ներառյալ:</p> |

| | |
|---|---|
| | <p>2-րդ փուլ Առաջին փուլով ներկայացված փաստաթղթերը Պատվիրատուի կողմից համաձայնեցվելուց հետո մշակել՝</p> <ul style="list-style-type: none"> • Կարևոր հանգույցների կոնստրուկտիվ լուծումները (նավամատուցներ, հենապատեր, ճանապարհային ծածկույթի շերտեր, դիտահարթակներ և այլն) <p>Մշակել նախագծի ինժեներական բաժինները՝</p> <ul style="list-style-type: none"> • Ջրամատակարարման և կոյուղու համակարգ (սխեմա), • Էլեկտրամատակարարման համակարգ (սխեմա), • Գազամատակարարման համակարգ (սխեմա), • արևային լույսի կայանների տեղադրման առաջարկություններ (սխեմա) <p>Պատվիրատուի հետ համաձայնեցված՝ ընտրել առաջնահերթ կառուցապատման հատված և մշակել այդ հատվածի հանրային տարածքների (ճեմուղի, ավտոմոբիլային ճանապարհներ, մայթեր, արտաքին լուսավորություն, բարեկարգում) աշխատանքային նախագիծը:</p> <p>Կապալառու նախագծային կազմակերպությունը պատվիրատուի հետ միասին իրականացնում է հետևյալ աշխատանքները՝</p> <p>Նախագծվող տարածքում առկա պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվության ուսումնասիրում, (կառույցները, հողամասերի սահմանները և պայմանագրային ժամկետների ավարտը), նախագծի իրագործման առաջնահերթ հատվածների որոշում, ընտրելով պարտավորություններից ազատ կամ քիչ ծանրաբեռնված հատվածները:</p> <p>Մասնակցում է նախագծի հանրային քննարկումներին, հրավիրելով նախագծման տարածքում առկա հողօգտագործողներին և հնարավոր ներդրողներին:</p> <p>Երկրորդ փուլով պահանջվող փաստաթղթերի կատարման ժամկետ է սահմանվում 120 օրացուցային օր:</p> <p>3-րդ փուլ Պատվիրատուի կողմից շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման և հանրային քննարկումների ընթացքում արված առաջարկությունները և դիտողությունները ստանալուց հետո դրանց հիման վրա նախագիծը լրամշակել և ներկայացնել Պատվիրատուին:</p> <p>Երրորդ փուլով պահանջվող փաստաթղթերի կատարման ժամկետ է սահմանվում 30 օրացուցային օր:</p> |
| <p>Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ</p> | <p>Փաստաթուղթը մշակվելու է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝</p> <ul style="list-style-type: none"> - ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի» պահանջները - ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները, - Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքների պահանջները, տարածքին առնչվող ծրագրային փաստաթղթերի դրույթները: <p>ՀՀ օրենսդրության և նորմատիվային փաստաթղթերի պահանջները:</p> |
| <p>Նախագծի կազմը</p> | <p>ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի», ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանով հաստատված Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների պահանջներին</p> |

Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ

Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված են պատմության և մշակույթի 1489 անշարժ հուշարձաններ (ներառյալ բնական հուշարձանները), այդ թվում.

- 4 բնական հուշարձաններ,
- 5 քարե դարի բնակատեղիներ,
- 19 քարայր կացարաններ,
- 1 քաղաքատեղի,
- 31 բնակատեղիներ,
- 94 գյուղատեղիներ,
- 8 ազգագրական տներ,
- 78 ամրոցներ,
- 2 աշտարակներ,
- 6 կամուրջներ,
- 2 քարավանատներ,
- 9 ջրաղացների համալիրներ և 17 առանձին ջրաղացներ,
- 11 ձիթհաններ,
- 3 ջրանցքներ և ջրաբաշխական համակարգեր,
- 2 ժայռապատկերների խմբեր,
- 3 սեպագիր արձանագրություններ,
- 1 ժայռակերտ պաշտամունքային համալիր,
- 135 եկեղեցիներ,
- 8 վանական համալիրներ,
- 89 մատուռներ,
- 5 վիշապ-քարակոթողներ,
- 1 մենհիր,
- 6 կոթողներ,
- 279 խաչքարերի խմբեր,
- 159 առանձին խաչքարեր,
- 2 հուշաղբյուր-կոթողներ,
- 25 երկրորդ աշխարհամարտին նվիրված հուշարձաններ,
- 2 անվանի գործիչներին նվիրված հուշարձաններ,
- 107 դամբարանադաշտեր,
- 14 առանձին պահպանված դամբարաններ,
- 252 գերեզմանոցներ,
- 71 տապանաքարերի խմբեր,
- 33 առանձին պահպանված տապանաքարեր:

Թվարկված հուշարձանները, որոնք գործնականում ներկայացնում են տարածաշրջանում հայտնի աշխարհիկ և հոգևոր գործառնություն ունեցող հուշարձանների համարյա բոլոր տեսակները, ժամանակագրորեն անընդմեջ ընդգրկում են առնվազն Բ.ա. 15-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարը, այսինքն՝ քարե դարից մինչև մեր ժամանակները: Դրանք տեղաբաշխված են Սևանա լճի շուրջը ոչ հավասարաչափ հուշարձանների ամենախիտ տեղաբաշխումներն առանձնանում են լճի արևմտյան, հարավ-արևմտյան և առավելապես՝ հարավային կողմերում, հաճախ կազմելով տարածամասակ ու տարաբնույթ հուշարձաններից բաղկացած համալիրներ (բրոնզ-երկաթեդարյան կիկլոպյան ամրոցների, բնակատեղիների, դամբարանադաշտերի, գյուղատեղիների, եկեղեցիների, գերեզմանոցների համադրմամբ), որոնք ներկայացնում են մի ուրույն պատմա- աշխարհագրական և մշակութային միջավայր:

Սևան քաղաքի պատմամշակութային հուշարձաններ

| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. |
|------|----|----|----|---|--------------|---------------------|----|---|
| . | | | | ԱՄՐՈՑ ՄԵՃԵՓ | մթա 3-1 հզմ | 0,6 կմ հս-ամ | . | Գոմաձոր թաղամաս, Մեծեփի գագաթին, քաղաքի հեռուստաաշտա-րակի մոտ |
| . | | | | ԳԵՐԵՉՄԱՆՈՑ | 9-20-րդ դդ. | հվ- աե մասում | . | Ցամաքաբերդ թաղամասի եզրին, երկաթգծից ձախ |
| .1. | | | | խաչքար | 9-10-րդ դդ. | | | ընկած գետնին, ստորին մասը չի պահպանվել |
| .2. | | | | խաչքար | 11-րդ դ. | | | ընկած գետնին |
| .3. | | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | | ընկած գետնին, եզրերը վնասված, վերին ձախ մասը չի պահպանվել |
| .4. | | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | | երկատված, կանգնեցված գետնին |
| .5. | | | | խաչքար | 14-15-րդ դդ. | | | ընկած գետնին, եզրերը ջարդված |
| .6. | | | | խաչքար | 14-15-րդ դդ. | | | ընկած գետնին, վերնամասը՝ չի պահպանվել |
| .7. | | | | տապանաքար՝ լիմեցի Կարապետ վարդապետի | 16-17-րդ դդ. | | | |
| .8. | | | | տապանաքար՝ Թումանի | 1701 թ. | | | |
| .9. | | | | տապանաքար՝ Խաչատուրի | 1708 թ. | | | |
| .10. | | | | տապանաքար՝ Մասումի | 1731 թ. | | | |
| . | | | | ԳԵՐԵՉՄԱՆՈՑ | 9-20-րդ դդ. | հս- ամ մասում | . | Գոմաձոր թաղամասի հս եզրին, գործող գերեզմանոցի հվ մասում |
| . | | | | ԴԱՄԲԱՐԱՆԱԴ ԱՇՏ | մթա 2-1 հզմ | հս եզրին | . | Ցամաքաբերդ թաղամասում, «Սևան» հյուրանոցից 300մաե |
| . | | | | ԵԿԵՂԵՑԻ | 9-10-րդ դդ. | 0,1 կմ հս | . | Գոմաձոր թաղամաս, միջնադարյան գերեզմանոցի տարածքում, ավերված |
| .1. | | | | գերեզմանոց | 10-17-րդ դդ. | | | Եկեղեցուց աե |
| | | 5 | | խաչքար | 12-րդ դ. | | | խրված հողի մեջ |

| | | | | | | |
|-----|------|---|----------------------|--------------|---------------------|---|
| | .1.1 | | | | | |
| | .1.2 | 5 | խաչքար՝ Սարգսի | 12-13-րդ դդ. | | ընկած գետնին, երկատված |
| | .1.3 | 5 | խաչքար | 12-13-րդ դդ. | | կիսով խրված հողի մեջ |
| | .1.4 | 5 | խաչքար | 12-13-րդ դդ. | | խրված հողի մեջ |
| | .1.5 | 5 | խաչքար | 12-13-րդ դդ. | | ընկած գետնին, երկատված |
| | .1.6 | 5 | խաչքար | 12-13-րդ դդ. | | ընկած գետնին, երկատված |
| | .1.7 | 5 | խաչքար | 13-րդ դ. | | խրված հողի մեջ |
| | .1.8 | 5 | խաչքար | 13-րդ դ. | | ընկած գետնին, եզրերը վնասված |
| | .1.9 | 5 | խաչքար | 14-15-րդ դդ. | | ընկած գետնին |
| . | | | ԵԿԵՂԵՑԻ | 1924 թ. | հս- ամ մասում | Գոմաձոր թաղամասի եզրին, Մեծեփ սարի լանջին |
| . | | | ԵԿԵՂԵՑԻ Ս. ԳԵՎՈՐԳ | 19-րդ դ. | հս- աե մասում | Ցամաքաբերդ թաղամասի կեստ.-ում |
| .1. | | | խաչքար | 11-րդ դ. | | ագուցված աե պատին, արտաքուստ |
| .2. | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | հվ ավանդատանը, ձախ եզրը ջարդված |
| .3. | | | գերեզմանոց | 11-19-րդ դդ. | | եկեղեցուց հվ |
| | .3.1 | 7 | խաչքար | 12-րդ դ. | | ընկած գետնին |
| | .3.2 | 7 | խաչքար | 14-15-րդ դդ. | | խրված հողի մեջ |
| | .3.3 | 7 | խաչքար | 14-15-րդ դդ. | | պատվանդանին |
| . | | | խաչքար | 9-10-րդ դդ. | հս- աե մասում | Ցամաքաբերդ թաղամաս, «Սևան» հանգստյան տան տարածքում, պատվանդանին, վերին և ստորին ձախ անկյունները կոտրված |
| . | | | խաչքար | 11-12-րդ դդ. | հս- աե մասում | Ցամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, Նորաշեն սրբատեղիի բեմին |
| 0 | | | խաչքար | 11-12-րդ դդ. | հս- աե մասում | Ցամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, Նորաշեն սրբատեղիի բեմին |
| 1. | | | խաչքար | 11-12-րդ դդ. | հս- աե | Ցամաքաբերդ թաղամաս, հյուրանոց |

| | | | | | | | |
|------|--|---|--|--------------|--|---------------|--|
| | | | | | | մասում | տանող ճանապարհից աջ, Նորաշեն սրբատեղիի բեմին |
| 2. | | | խաչքար | 11-12-րդ դդ. | | հս-առե մասում | Ցամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, Նորաշեն սրբատեղիի բեմին |
| 3. | | | խաչքար | 11-12-րդ դդ. | | հս-առե մասում | Ցամաքաբերդ թաղամաս, հյուրանոց տանող ճանապարհից աջ, Նորաշեն սրբատեղիի բեմին |
| 4. | | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՐՎԱԾՆԵՐԻՆ | 1980 թ. | | ք. մ. | Գոմաձոր թաղամաս ճարտ.՝ Ս. Մանվելյան |
| 5. | | | ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽՄ ԱՆՆՈՒԿ | 16-րդ դ. | | ամ մասում | Գոմաձոր թաղամաս, Մեծեփ սարի արևելյան լանջին |
| 5.1. | | | խաչքար | 12-րդ դ. | | | ազուցված առե պատին, Ներքուստ |
| 5.2. | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | | ազուցված ամ պատին, Ներքուստ |
| 5.3. | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | | Ներսում, երկատված |
| 5.4. | | | խաչքար | 12-13-րդ դդ. | | | ընկած գետնին |
| 5.5. | | | խաչքար | 14-15-րդ դդ. | | | կանգնեցված Ներսում |
| 6. | | | ՄԱՏՈՒՌ ԹՈՒԽՄ ԱՆՆՈՒԿ | 16-17-րդ դդ. | | հս մասում | Ցամաքաբերդ թաղամաս |
| 7. | | | ՌԵՍՏՈՐԱՆԻ ՇԵՆՔ. «ԾՈՎԻՆԱՐ» ՌԵՍՏՈՐԱՆԸ | 1963 թ. | | Սև անի ավին | ճարտ.՝ Ռ. Իսրայելյան |
| 8. | | | ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ. ՍԵՎԱՆԻ ՎԱՆՔԸ | 9-20-րդ դդ. | | հս-առե մասում | թերակղզում |
| 8.1. | | | Եկեղեցի ս. Առաքելոց | 874 թ. | | | |
| | | 1 | խաչքար | 10-րդ դ. | | | հենած բեմին, 3 խաչքարերից ձախից 1-ինը |
| | | 1 | խաչքար՝ Ղազարի | 13-րդ դ. | | | հենած հս պատին |
| | | 1 | խաչքար | 14-15-րդ դդ. | | | հենած հվ պատին, Ներքուստ |
| | | 1 | խաչքար՝ Ներսեսի | 1425 թ. | | | հենած հվ պատին, Ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել |
| | | 1 | խաչքար | 1510 թ. | | | հենած խորանի հս պատին, վերին և ստորին աջ անկյունները՝ կտրված, |

| | | | | | | | |
|------|---|--------|---|--------------|--|--|--|
| | | | | | | | թվակիր |
| | 1 | | խաչքար | 16-րդ դ. | | | կանգնեցված հվ պատի մոտ, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել |
| | 1 | | խաչքար | 16-րդ դ. | | | բեմին, արձանագիր |
| | 1 | | խաչքար՝ Ջայրապետի և Ջրեպեկայի («Խաչելություն») | 1653 թ. | | | խորանում, պատվանդանին կազմող՝ Տրդատ բերվել է 19-րդ դ. կեսին՝ Լորաշեն գյուղից |
| | 1 | | տապանաքար | 1875 թ. | | | ներսում, բերված Բջնիից |
| 8.2. | | | եկեղեցի ս. Աստվածածին | 874 թ. | | | |
| | 1 | | գավիթ | 1653 թ. | | | |
| | | 18.2 | խաչքար | 9-10-րդ դդ. | | | |
| | | .1.1. | խաչքար | 9-10-րդ դդ. | | | |
| | | .1.2. | խաչքար | 9-10-րդ դդ. | | | |
| | | .1.3. | խաչքար | 10-11-րդ դդ. | | | հենած հս պատին, ներքուստ, եզրերը ջարդոտված |
| | | .1.4. | խաչքար | 11-րդ դ. | | | հենած հս պատին, վերնամասը՝ չի պահպանվել |
| | | .1.5. | խաչքար | 11-12-րդ դդ. | | | պահպանվել է միջին մասը |
| | | .1.6. | խաչքար | 11-12-րդ դդ. | | | տեղադրված ամ պատին, ստորին ձախ և վերին աջ անկյունները՝ ոտրված |
| | | .1.7. | խաչքար | 12-րդ դ. | | | վերնամասը՝ չի պահպանվել |
| | | .1.8. | խաչքար՝ «Թևավոր խաչ» | 12-րդ դ. | | | հենած հվ պատին, արտաքուստ, վերին խաչաթևը չի պահպանվել, արձանագիր խաչքարը Սրան է բերվել Դոմաշեն գյուղից |
| | | .1.9. | խաչքար | 12-13-րդ դդ. | | | ստորին մասը չի պահպանվել |
| | | .1.10. | խաչքար | 12-13-րդ դդ. | | | եզրագոտին ջարդոտված |
| | | .1.11. | խաչքար | 12-13-րդ դդ. | | | վերնամասը՝ չի պահպանվել |
| | | .1.12. | խաչքար | 12-13-րդ դդ. | | | հենած եկեղեցու ամ պատին, արտաքուստ, մուտքից ձախ |
| | | 18.2 | խաչքար | 13-րդ դ. | | | աջ եզրը կոտրված |

| | | | | | | | |
|--|--|--|--------|--------------------|--------------|--|---|
| | | | .1.13. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 13-րդ դ. | | բեկոր |
| | | | .1.14. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-րդ դ. | | |
| | | | .1.15. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | հենած ամ պատին, արտաքուստ |
| | | | .1.16. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | |
| | | | .1.17. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | Ներսում |
| | | | .1.18. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | տեղադրված հվ պատին, Ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել |
| | | | .1.19. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | հենած հս պատին, Ներքուստ |
| | | | .1.20. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | հենած հվ պատին, Ներքուստ |
| | | | .1.21. | | | | |
| | | | 18.2 | խաչքար՝ խաթունի | 15-16-րդ դդ. | | հենած հս պատին |
| | | | .1.22. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 15-16-րդ դդ. | | տողադրված հվ պատին, Ներքուստ |
| | | | .1.23. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 1551 թ. | | հենած հս պատին, բեկոր |
| | | | .1.24. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-րդ դ. | | հենած ամ պատին, արտաքուստ, մուտքից աջ |
| | | | .1.25. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-րդ դ. | | վերնամասը՝ չի պահպանվել |
| | | | .1.26. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-րդ դ. | | հենած հս պատին, եզրերը ջարդոտված |
| | | | .1.27. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-րդ դ. | | արձանագիր, ստորին եզրը չի պահպանվել |
| | | | .1.28. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | հենած հս պատին, ստորին և վերին եզրերը կոտրված |
| | | | .1.29. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | հենած հս պատին, Ներքուստ |
| | | | .1.30. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | աջակողմյան մասը չի պահպանվել |
| | | | .1.31. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | տեղադրված հվ պատին, վերնամասը՝ չի պահպանվել |
| | | | .1.32. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | վերնամասը՝ չի պահպանվել |
| | | | .1.33. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | պահպանվել է միջնամասը |
| | | | .1.34. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 16-17-րդ դդ. | | արձանագիր, ստորին մասը չի պահպանվել |
| | | | .1.35. | | | | |
| | | | 18.2 | խաչքար | 1615 թ. | | հվ-ամ ամկյան մոտ, վերին աջ |
| | | | .1.36. | | | | |

| | | | | | | |
|------|--------------|----------------|--------------------------|-------------------|--|---|
| | | | | | | անկյունը կտրված |
| | | 18.2 .1.37. | տապանաքար | 15-16-րդ դդ. | | իվ պատի մոտ, եզրերը ջարդոտված |
| 8.3. | | | Եկեղեցի ս. Յարություն | 305 թ, 9-րդ դ. | | ավերված |
| 8.4. | | | ճեմարանի շենք | 9-րդ դ. | | վրկևգ.՝ 1834-1835 թթ., 1907թ. |
| 8.5. | | | գերեզմանոց | 9-16-րդ դդ. | | Եկեղեցիների շուրջը |
| | 1 8.5.1. | | խաչքար | 9-10-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 10 մ աե, կանգնեցված գետնին, ձախ եզրագոտին ջարդված |
| | 1 8.5.2. | | խաչքար | 9-10-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին |
| | 1 8.5.3. | | խաչքար | 12-13-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճաններից աջ, 4 խաչքարերից ձախից 1- ինը |
| | 1 8.5.4. | | խաչքար | 1212 թ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում |
| | 1 8.5.5. | | խաչքար՝ Աբիասանի | 1227 թ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ աե, վերնամասը՝ կտրված |
| | 1 8.5.6. | | խաչքար | 1462 թ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, թվակիր |
| | 1 8.5.7. | | խաչքար՝ Պռոշի | 15-16-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում |
| | 1 8.5.8. | | խաչքար | 15-16-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ ամ, դեպի վանք տանող աստիճանների սկզբնամասում, երկատված |
| | 1 8.5.9. | | խաչքար՝ Սուլթանի | 15-16-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած 4 խաչքարերից ձախից 1- ինը |
| | 1 8.5.10. | | խաչքար | 15-16-րդ դդ. | | ս. Աստվածածին Եկեղեցուց 100 մ աե, |

| | | | | | | |
|---|--|--------------|-----------|--------------|--|---|
| | | | | | | երկատված, ընկած գետնին |
| | | 1 8.5.11. | խաչքար | 1557 թ. | | ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս, պատվանդանին կանգնած զույգ խաչքարերից աջակողմյանը |
| | | 1 8.5.12. | տապանաքար | 15-16-րդ դդ. | | ս. Աստվածածին եկեղեցուց 15 մ հս |
| <p>Սևան քաղաքի Ցամաքաբերդ կոչվող թաղամասից մոտ 2.5-3 կմ դեպի արևելք գտնվում է մի փոքրիկ մատուռ, որ տեղացիներն անվանում են «Մաշտոցներ»:</p> <p>Վիշապ, վիշապներ, վիշապաքարեր - մեգալիթյան հուշարձան, քարակոթող, մեկ կտոր քարից, ներհատուկ է լոկ Հայկական լեռնաշխարհին:</p> <p>Սպիտակ բերդի Աղջապալա միջնադարյան ամրոց-պահպանվել են նույն անունը կրող ընդարձակ բնակատեղին՝ 13-14-րդ դդ. եկեղեցու ավերակներով և մի քանի գերեզմանոցներով, որոնց հուշակոթողների թվագրությունը ևս վերաբերում է 10-14-րդ դդ.:</p> | | | | | | |

Հավելված 7.

Լճաշեն գյուղի պատմամշակութային հուշարձաններ

| 3. | 4. | 5. | 6. | 8. |
|-----|--|--------------|--------------|--------------------------------------|
| | ԳԼԽԱՏՈՒՆ | 19-րդ դ. | գ. մ | կառուցել է Սարգիս Մանուկյանը |
| | ԳԼԽԱՏՈՒՆ | 19-րդ դ. | գ. մ. | Վարազդատ Պողոսյանի տան մոտ |
| | ԳԼԽԱՏՈՒՆ | 19-րդ դ. | գ. մ. | Անդրանիկ Մելիքյանի տան մոտ |
| | ԳՅՈՒՐԱՏԵՐԻ ԳԱՆՁԱՎԱՆՔ («Անգիր վանք») | 9-17-րդ դդ. | 1,5 կմ հվ-ատ | Սևան-Գավառ ճանապարհի ձախ կողմում |
| .1. | եկեղեցի Գանձավանք («Անգիր վանք») | 9-10-րդ դդ. | | գյուղատեղիի առ կողմում, կիսավեր |
| | ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱ ՇՏ «ԳԵՂՈՒՆԻ» | մթա 3-2 հզմ | 1 կմ հվ-ատ | Սևանա լճի հս-ամ ափին |
| | ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱ ՇՏ. ԼՃԱՇԵՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ | մթա 2-1 հզմ | 1,5 կմ հվ-ատ | Սևան-Գավառ հին ճանապարհի ձախ կողմում |
| | ԵԿԵՂԵՑԻ Ս. ՀՈՒՓՍԻՄԵ | 7-րդ դ. | գ. մ. | |
| .1. | խաչքար | 10-11-րդ դդ. | | ագուցված հվ պատին, արտաքուստ |
| .2. | խաչքար | 11-12-րդ դդ. | | ագուցված ամ պատին, արտաքուստ |
| .3. | խաչքար | 13-րդ դ. | | եկեղեցու ներսում |
| | խաչքար | 14-15-րդ | | բեմի ճակատին, ձախից 1-ինը |

| | | | | | |
|------|--------|--------------------------------|--------------|--|---|
| .4. | | | դդ. | | |
| .5. | | խաչքար | 15-րդ դ. | | բեմի ճակատին, աջից 3-րդը |
| .6. | | խաչքար | 15-րդ դ. | | ագուցված հվ պատին, մուտքից ձախ, արտաքուստ, արձանագիր |
| .7. | | խաչքար | 15-16-րդ դդ. | | ագուցված ամ պատին, արտաքուստ, արձանագիր |
| .8. | | խաչքար՝ Քիրմանի | 15-16-րդ դդ. | | հվ ավանդատանը |
| .9. | | խաչքար | 1557 թ. | | բեմի ճակատին, աջից 5-րդը, թվակիր |
| .10. | | խաչքար՝ Քիրմանի | 1561 թ. | | բեմի ճակատին, աջից 4-րդը |
| .11. | | խաչքար | 16-րդ դ. | | ագուցված մուտքից ձախ, բեկոր, արձանագիր |
| .12. | | տապանաքար | 17-18-րդ դդ. | | հենած բեմի ճակատին |
| .13. | | տապանաքար՝ Սահակի | 1707 թ. | | ավանդատանը, պահպանվել է 2 բեկորով |
| .14. | | գերեզմանոց | 10-20-րդ դդ. | | եկեղեցու շուրջը |
| | 14.1. | 7. խաչքար | 10-րդ դ. | | եկեղեցուց հս, հենած տապանաքարին |
| | 14.2. | 7. խաչքար | 13-14-րդ դդ. | | եկեղեցուց հս-ան, դրված հորիզոնական դիրքով որպես տապանաքար |
| | 14.3. | 7. խաչքար՝ Վարդանի | 15-րդ դ. | | ընկած գետնին |
| | 14.4. | 7. խաչքար | 16-րդ դ. | | ընկած գետնին, արձանագիր |
| | 14.5. | 7. տապանաքար | 15-16-րդ դդ. | | եկեղեցուց 2 մ հս |
| | 14.6. | 7. տապանաքար՝ Նուրբեկի | 1594 թ. | | |
| | 14.7. | 7. տապանաքար | 16-րդ դ. | | եկեղեցու հվ պատի մոտ, արձանագիր, կտորված |
| | 14.8. | 7. տապանաքար | 16-17-րդ դդ. | | եկեղեցուց 1 մ հս |
| | 14.9. | 7. տապանաքար | 16-17-րդ դդ. | | եկեղեցուց ամ |
| | 14.10. | 7. տապանաքար | 16-17-րդ դդ. | | |
| | 14.11. | 7. տապանաքար՝ Հովսեփի | 16-17-րդ դդ. | | եկեղեցուց հս-ան |
| | 14.12. | 7. տապանաքար՝ Սարգսի | 1668 թ. | | եկեղեցուց հս |
| | 14.13. | 7. տապանաքար՝ Թուխձամի | 1686 թ. | | եկեղեցուց հս-ան |
| | 14.14. | 7. տապանաքար՝ պարոն Գրիգորի | 1696 թ. | | եկեղեցուց հս-ան |
| | 14.15. | 7. տապանաքար՝ Փարու | 17-րդ դ. | | եկեղեցուց հս-ան |
| | 14.16. | 7. տապանաքար | 17-րդ դ. | | եկեղեցուց հս-ան, արձանագիր |

| | | | | | |
|-------|--------------|---|-------------------|---------------------|---|
| | 7. 14.17. | տապանաքար՝ Մելքունի | 1701 թ. | | եկեղեցուց հս-ան |
| | 7. 14.18. | տապանաքար՝ Բեկիջանի | 1702 թ. | | եկեղեցուց հս-ան |
| | 7. 14.19. | տապանաքար՝ պարոն Գասպարի | 1703 թ. | | եկեղեցուց հս-ան |
| | 7. 14.20. | տապանաքար՝ Ղազարի | 1705 թ. | | |
| | 7. 14.21. | տապանաքար՝ Ղազարի | 1707 թ. | | եկեղեցուց հս-ամ |
| | 7. 14.22. | տապանաքար | 1737 թ. | | եկեղեցուց ամ, արձանագիր |
| | 7. 14.23. | տապանաքար՝ Ամիրի | 1746 թ. | | եկեղեցուց հս-ան |
| . | | խաչքար | 9-10-րդ դդ. | Գ. Մ. | Վաղո Մանուկյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում, բեմին |
| . | | խաչքար | 10-րդ դ. | Հվ մասու մ | բարձունքի վրա, հենած ժայռաբեկորի |
| 0. | | խաչքար | 16-րդ դ. | Գ. Մ. | կանգնեցված գետնին, 2-րդ աշխարհամարտում զոհված մարտիկների հուշարձանի մոտ |
| 1. | | խաչքար | 16-17-րդ դդ. | Գ. Մ. | Մուրադ Կարապետյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում |
| 2. | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՅՎԱԾՆԵՐԻՆ | | գ. Մ. | |
| 3. | | ՄԱՏՈՒՌ Ս. ԳԵՎՈՐԳ | վրկնգ՝ 1911 թ. | Հվ-ան մասու մ | |
| 3.1. | | խաչքար | 9-10-րդ դդ. | | ագուցված հվ պատին, ներքուստ, ստորին մասը չի պահպանվել |
| 3.2. | | խաչքար | 9-10-րդ դդ. | | բեմին, 6 խաչքարերից ձախից 1-ինը, վերնամասը՝ չի պահպանվել |
| 3.3. | | խաչքար | 998 թ. | | բեմին, 6 խաչքարերից ձախից 2-րդը պատվիրատու՝ Գրիգոր |
| 3.4. | | խաչքար | 10-րդ դ. | | գլխիվայր ագուցված հվ պատին, ներքուստ, ջարդոտված |
| 3.5. | | խաչքար | 10-11-րդ դդ. | | հենած հս պատին, ստորին ձախ անկյունը՝ կտրված |
| 3.6. | | խաչքար | 10-11-րդ դդ. | | բեմին, 6 խաչքարերից աջից 1-ինը |
| 3.7. | | խաչքար | 11-րդ դ. | | բեմին, 6 խաչքարերից աջից 3-րդը |
| 3.8. | | խաչքար | 12-13-րդ դդ. | | ագուցված հվ պատին, ներքուստ |
| 3.9. | | խաչքար | 12-13-րդ դդ. | | բեմին, 6 խաչքարերից աջից 2-րդը |
| 3.10. | | խաչքար | 12-13-րդ դդ. | | բեմին, 6 խաչքարերից ձախից 3-րդը |
| 3.11. | | խաչքար | 14-15-րդ դդ. | | հենած հս պատին, մուտքի մոտ |
| | | գերեզմանոց | 9-15-րդ | | մատուռի շուրջը, նեղ ճանապարհով |

| | | | | | | |
|----|--------|---------|--|--------------|--------------|--|
| | 3.12. | | | դդ. | | բաժանվում է 2 հատվածների |
| | | 1 | խաչքար | 12-րդ դ. | | պատվանդանին |
| | | 3.12.1. | | | | |
| | | 1 | խաչքար | 12-13-րդ դդ. | | մատուռի առ պատի մոտ, կանգնեցված գետնին |
| | | 3.12.2. | | | | |
| | | 1 | խաչքար | 13-14-րդ դդ. | | եզրերը՝ վնասված |
| | | 3.12.3. | | | | |
| | | 1 | խաչքար | 14-15-րդ դդ. | | կերտված ժայռաբեկորին |
| | | 3.12.4. | | | | |
| 4. | | | ՄԱՏՈՒՌԻ ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ | 19-20-րդ դդ. | հվ-առ մասում | գործող գերեզմանոցի տարածքում |
| | 4.1. | | խաչքար | | | մատուռի ներսում, եռատված |
| 5. | | | ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ՎԱՐՄԻՐ ՎԱՆՔ» | 9-20-րդ դդ. | հվ-առ մասում | գյուղի եզրին, գերեզմանոցի հին թաղումների տարածքում |
| | 5.1. | | եկեղեցի | 9-10-րդ դդ. | | 1-ին եկեղեցի, ավերված |
| | | 1 | զավիթ | 10-12-րդ դդ. | | ավերված |
| | 5.1.1. | | | | | |
| | 5.2. | | եկեղեցի | մշնդ | | 2-րդ եկեղեցի, ավերված |
| | 5.2.1. | 1 | խաչքար | 11-12-րդ դդ. | | տեղահանված |
| | 5.3. | | մատուռ | 19-րդ դ. | | |
| | | 1 | խաչքար | 9-10-րդ դդ. | | մատուռի բեմին |
| | 5.3.1. | | | | | |
| | | 1 | խաչքար | 13-րդ դ. | | մատուռի բեմին |
| | 5.3.2. | | | | | |
| | 5.4. | | գերեզմանոց | 9-20-րդ դդ. | | մատուռի շուրջը |
| | | 1 | խաչքար | 9-10-րդ դդ. | | հենած քարաբեկորին |
| | 5.4.1. | | | | | |
| | | 1 | խաչքար | 964 թ. | | Պատվանդանին պատվիրատու՝ Գրիգոր Բարակավիզ |
| | 5.4.2. | | | | | ն պահպանվում է ուղղանկյուն կառույցի ներսում, փոստի շենքի մոտ |
| 6. | | | ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն. ԱՐԳԻՇՏԻ Ա-Ի ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ը | մթա 776թ. | Հս մասում | |

Սևանա լճի մակարդակի իջնելու հետևանքով Ղամբարանադաշտի հարավային ծայրին, երևում է Լճաշենի կիկլոպյան ամրոցն ու հնագույն քաղաքատեղիի մնացորդները, որը գրավում է ավելի քան 55 հեկտար տարածություն և տարածվում է 15 բլուրների վրա:

Կատարված պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվել են նախապատմական շրջանի բնակատեղիներ, բերդ-ամրոցներ, դամբարանադաշտեր ու առանձին կոթողներ:

Լճաշեն հնագիտական հուշարձանը համաշխարհային ճանաչում ստացավ գյուղից 3 կմ հարավ-արևելք, լճի ափամերձ հատվածում գտնվող բրոնզեդարյան դամբարանադաշտի շնորհիվ: Այն գրավում է բավականին ընդարձակ տարածք՝ 8 հեկտար և ընդգրկում է շուրջ 800 դամբարան:

Դիտողությունների պատասխան ամփոփաթերթ

| <p>«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԼՃԱՇԵՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂՑԻ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԶԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ»</p> <p>Նախագծի I փուլի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփ տեղեկանք</p> | | |
|---|--|---|
| Դիտողություն ներկայավրած մարմնի անվանում | Դիտողություններ և առաջարկություններ | Պարզաբանումներ և կատարված փոփոխություններ |
| <p>ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով 16.04.2021թ.</p> <p>N 10-փ/21</p> | <p>«Արխիտոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախագիծը շատ այժմեական է և ըստ այս փաստաթղթում եղած նկարագրության պատշաճ ձևով դրա իրականացումը հնարավորություն կտա լուծել կամ մեղմել Սևանա լճի բազմաթիվ խնդիրներ:</p> <p>Փաստաթուղթը պարունակում է քաղաքաշինական կանոնադրությամբ պահանջվող բաժիններն ու տեղեկությունները: Մինևույն ժամանակ այն կրում է առավելապես նկարագրական և չպարտավորեցնող բնույթ:</p> <p>Մասնավորապես դա վերաբերում է շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանը ուղղված բնապահպանական միջոցառումներին: Չկան կոնկրետ ցուցիչներ և դրանք ապահովելու երաշխիքներ: Առաջարկվում է այդ մասին հստակեցնել:</p> | <p>Ընդունվել է, կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>Փաստաթուղթը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջում է շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում, որի շրջանակներում նախատեսվում են համապատասխան նախատեսվող գործունեություններ: Ռազմավարական գնահատումը ներառում է առավել որակական և նկարագրական գնահատումներ, կոնկրետ միջոցառումները և գնահատումները նախատեսվում են դրա շրջանակներում նախատեսվող գործունեությունների համապատասխան փաստաթղթերում:</p> |